



ԿԸ ՄԱՆ ՆԵ ԱՄԲՈՂԱԿԱՆ ՏԵՐԸ ՄԵՐ ԱՐԳԱՐ ԻՐԱՒՈՒՆԵՆԵՐՈՒՆ

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՅ ՏՈՆԱԼՏ ԹՐԱՄՓԻ ՈՒՐԵՐԶԸ ԿՆՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՔԵԿՈՂՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Այսօր մենք կը նշենք Մեծ Եղեռնի յիշատակը եւ կը յարգենք այն հրաշալի հոգիներու յիշատակը, որոնք տուժած են 20-րդ դարու վատթարագոյն աղէտներէն մէկուն ընթացքին: 1915 թուականէն սկսեալ մէկուկէս միլիոն հայեր արքայապետուեցան եւ



մահացան Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն: Յիշատակի այս օրը մենք կրկին կը միանանք Ամերիկայի եւ ամբողջ աշխարհի հայ մեծ համայնքին՝ սգալով կորսնցուցած բազմաթիւ կեանքերուն համար»:

ԿՆՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՔԱՆԻ ՄԸ ԿԱՐԻՐ ԹՈՒՐՔ ԶԲՕՍԱՇՆՐԶԻԿ Կ'ԱՅՅԵԼԷ

Հայոց ցեղասպանութեան թանգարանը տարեկան կ'ունենայ մինչեւ 100 հազար այցելու: «Արմենիան»-ի մամուլի սրահին մէջ հրատարակուած ատլասին «Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ» հիմնադրամի տնօրէն Էդիտա Գոյեան հպարտութեամբ նշեց, որ իրենց թանգարանը Հայաստանի 3 ամենաշատ այցելութիւն ունեցող թանգարաններէն մէկն է:



«Մեր թանգարան այցելութիւնները աշխարհագրութիւնը բաւական ընդգրկուած է ու պէտք է ասեմ, որ վերջին շրջանում կառուցուածքում որոշակի փոփոխութիւններ են նկատուած: Եթէ տարիներ առաջ Հայոց ցեղասպանութեան թանգարան անելի շատ գալիս էին Ռուսաստանից, երոպական տարբեր երկրներէրից, ապա այժմ նկատուած ենք, որ գնալով աճում է Չինաստանից, Հարաւային Բոսնիայից, Ֆիլիպիններէրից եկող զբօսաշրջիկներէրի թիւը»,- ըսաւ Էդիտա Գոյեան:

Թանգարան այցելող զբօսաշրջիկներուն համար անելի լաւ պայմաններ ստեղծելու, օտար լեզուներով իրազեկուած իրականացնելու համար կ'ընդլայնուի ծայնային ուղեկցութեան ծառայութիւնը: Նախորդ տարուրնէ թանգարանին մէջ ծայնային ուղեկցութեան ծառայութեան մէջ ներառուած էին անգլերէնը, ֆրանսերէնը, ռուսերէնը: Բրիտանի անուան պետական համալսարանին հետ համագործակցութեամբ նիւթերը թարգմանուած են չինարէն, քորեերէն եւ շատ շուտով այդ երկու լեզուներով եւս պիտի ըլլան ծայնային ուղեկցութեան ծառայութիւններ: Յառաջիկային համար կը ծրագրուի ներառել գերմաներէնը, արաբերէնը, իտալերէնը:

Էդիտա Գոյեան տեղեկացուց, որ այցելուներու շարքին կան նաեւ թուրքեր: Անոնց թիւը ամէն տարի քանի մը հարիւր կ'ըլլայ: Նախորդ տարի թանգարան այցելած է 300 թուրք զբօսաշրջիկ:

ԱՄԵՆԱՅՆ ԿՆՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱԽԱՅՏԱԳԻՐ ՅՈՒՍԷ Է ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցաւակցազիր յղած է Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանչիսկոս Պապին վախճանման առիթով:

«Երջանկալիշատակ Ֆրանչիսկոս Պապը խոնարհ, քաջ ու բարի հովիւ էր, որ հաւատարմօրէն կը քալէր մեր Տէր Յիսուս Քրիստոսի հետքերով: Ան ստանձնեց պապական բարձր ու պատասխանատու առաքելութիւնը դժուարին ժամանակներուն եւ վկայեց Աւետարանը՝ մշտապէս պաշտպան ըլլալով արդարութեան ու խաղաղութեան, առանձնակի ուշադրութիւն ու խնամք բերելով կաթողիկոսներուն, ինչպէս նաեւ՝ իր կարեւոր ներդրումը բերելով միջեկեղեցական յարաբերութիւններու զօրացման, ըսուած է Վեհափառ Հայրապետի ցաւակցազիրին մէջ:

Նորին Սրբօրինը ընդգծած է, որ հայ ժողովուրդը երախտագիտութեամբ պիտի յիշէ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով Սուրբ Պետրոս տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագը, Սուրբ Գրիգոր Նարեկացիի հոշակումը որպէս Տիեզերական Եկեղեցոյ Վարդապետ, ինչպէս եւ Սրբազան Քահանայապետի այցը Հայաստան:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր աղօթքը կը վերառաքէ առ Աստուած երջանկալիշատակ Սրբազան Պապի հոգու հանգստութեան եւ խաղաղութեան, ինչպէս եւ ողջ Կաթողիկ Եկեղեցոյ հոգետոր դասի եւ հաւատացելոց մխիթարութեան համար:

NEWMAG ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ ԹՈՒՐՔ ՊԱՏԱՐԱՆ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՍԸ ԵՒ ԱՆՈՐ ՆՈՐ ԳԻՐՔԸ՝ «ՑԵՂԱՄՊԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՆԲՆԵՐԸ»

Newmag հայերէնով հրատարակած է Թաներ Աքչամի «Տեղասպան պետութեան ակունքները» գիրքը, որ կը բացայայտ Թուրքիոյ պետականու-



թեան մութ հիմքերը: Ընդհանրապէս եւ «Տեղասպանագիտութեան շարքուան» ծիրէն ներս թուրք պատմաբանը կը գտնուի Հայաստան:

Թաներ Աքչամ իր իրաւաստուկ տեղը ունի ժամանակակից պատմագրութեան մէջ: Նախկին քաղաքական բանտարկեալ մը, որ փախած է Թուրքիայէն եւ քաղաքական ասպարէտ ստացած Գերմանիոյ մէջ, իր գիտական ասպարէտը նուիրած է պատմական ճշմարտութեան բացայայտման: Իր դոկտորական ատարածառը՝ «Թրքական ազգայնականութիւնը եւ Հայոց ցեղասպանութիւնը» նիւթին շուրջ պաշտպանելէ ետք, Աքչամ դարձած է Քլարք համալսարանի Հայագիտութեան կեդրոնի ղեկավարը եւ միջազգայնօրէն ճանչցուած հեղինակութիւն մը:

Ի ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ



Սիրելի Հաւատացեալներ, Այս առաւօտ, Տէր Յիսուսի յարութեան տօնը տակաւին թարմ մեր յիշողութեան մէջ, աշխարհը լսեց Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցոյ Պապ Նորին Սրբօրին Ֆրանչիսկոսի մահուան գոյժը:

Ֆրանչիսկոս Քահանայապետը ակնառու անձնատրութիւն մըն էր բազմադիմի տիտղոսներով, եւ մանաւանդ Հայ Եկեղեցոյ հանդէպ իր տաճած յատուկ բարեկամութեամբ:

Ազնիւ եւ շնորհալի էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանդէպ, Վեհափառ Հօր հետ հանդիպումներուն ընթացքին՝ Հռոմի եւ Հայաստանի մէջ: Ֆրանչիսկոս Պապին անձնական օրինակը մարդկայնութեան, զուրգուրանքի, եւ սիրոյ կեանքի ճանապարհներով քալող ամէն մարդոց հանդէպ զեղեցիկ վկայութիւն է Տէր Յիսուսի կեանքին եւ քարոզութեան:

Միշտ զգացած եմ Նորին Սրբօրին յատուկ կապը Հայ Եկեղեցոյ հաւատացեալներուն հանդէպ: Բնական է, որ իբրեւ ողորմածութեան տիպար՝ ան միշտ յայտնեց իր կարեկցութիւնը մեր ժողովուրդին կրած տաժանագին վտանգներուն, ոչ միայն պատմութեան ընթացքին՝ այլ նաեւ մեր օրերուն:

Արդարեւ, ես անձնապէս զգացի այդ ջերմութիւնը երբ մենաշնորհն ունեցայ անձնապէս այցելելու անոր 2020-ին:

Կարեւոր է յիշել որ Ֆրանչիսկոս Պապը խանդավառ բարեգործութիւն ցուցաբերած է մեր ժողովուրդին հանդէպ, եւ առանց վարանումներու յայտնած է իր հիացումը մեր հոգետոր եւ մշակութային բարձրութիւններուն: Հայ հաւատացեալները երբեք պիտի չմոռնան, որ անոր քահանայապետութեան շրջանին հայոց մեծագոյն սուրբերէն՝ Գրիգոր Նարեկացիին՝ հոշակուեցաւ Տիեզերական Եկեղեցոյ Վարդապետ: Պիտի չմոռնան նաեւ Ֆրանչիսկոսի պատմական այցելութիւնը Հայաստան, որ ջերմացուց մեր հայրենակիցներուն հոգիները:

Ֆրանչիսկոս Պապին աստուածային սիրոյ օրինակը միշտ պիտի ներշնչէ անհամար մարդոց հոգիները ամբողջ աշխարհի մէջ:

Ի դիմաց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայաստանեայց Եկեղեցոյ Արեւելեան Թեմին՝ այսօր կը յայտնեմ իմ անձնական խորին ցաւակցութիւնս մեր Կաթողիկէ եղբայրներուն եւ քոյրերուն:

Թող յարուցեալ Տէրը լուսատրէ Ֆրանչիսկոս Պապին հոգին, եւ պահպանէ իր խոնարհ ծառան մահուան մէջ ինչպէս կեանքին, եւ մխիթարութիւն պարգեւէ անոր ժողովուրդին այս եւ յառաջիկայ օրերուն:

Աղօթարար՝
ՄԵՄԲՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՄԵԱՆ
Առաջնորդ
4/21/25

ՈՐՏԵՂ ՕՐԷՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է, ԱՅՆՏԵՂ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՒԺԵՂ Է

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Հայ առաքելական եկեղեցու տաղաւար տօներին քրիստոսի յարութեան՝ Սուրբ Զատիկի օրերն են: Մարդիկ միմեանց ողջունում են, լաւ լուրով ուրախացնում: Հայ մարդ են, ժողովրդիս ու Հայրենիքս շատ-շատ են սիրում: Բնականաբար շատ կը ցանկանայի ողջունել բոլորին եւ խօսել միայն լաւ բաների մասին: Բայց, ցաւօք, չեն կարող ինքս ինձ կեղծել, քանզի Եռաբլուր ունենք, ժողովրդիս մօտ կէսն աղքատ է, մեր պետականութիւնը՝ վտանգուած, ապագան էլ՝ մշուշապատ: Քանզի ինչպէս անգլիացի բանաստեղծ Շոն Տոնն է ասել ոչ մի մարդ մեկուսացած, ինքն իրեն համար ապրող կղզի չէ: Իւրաքանչիւր մարդ մի կտորն է Մայրցամաքի, մի մասն ամբողջ աշխարհի: Եթէ ծովը բշի տանի մերձափնեայ ժայռը, Երրոպան կը փոքրանայ, ինչպէս կը փոքրանար, եթէ տանէր մի հրուանդան, տանէր քո ընկերների կամ քո սեփական կալուածքը: Իւրաքանչիւր մարդու մահը փոքրացնում է ինձ, որովհետեւ իմ մէջ ամբողջ մարդկութիւնն է: Եւ որս համար էլ երբեք մի՛ հարցրու, թէ ում մահն է գուժում գանգը: Քո՛ մահն է գուժում:

Յետոյ էլ վերջերս յաճախ են ինձ բռնում այն մտքին, որ համակարծիք են դարձել շոտլանդացի արձակագիր եւ բանաստեղծ, արկածային վէպերի աշխարհահռչակ հեղինակ, անգլիական ցեղանունով գեղարվեստի մեծագործ Ռոպերթ Լուիս Սթիւենսընի այն մտքին, որ՝ ամէն օրը մի դատէք ըստ բերքի, որ հաւաքել էք, այլ ըստ սերմի, որ ցանել էք: Այսինքն, բաւական է շոտլանդացի գրողի մտքով ինչ պատահի: Ուղղակի այսուհետեւ հարկաւոր է առաջնորդուել հազար չափի, մէկ ցանի սկզբունքով: Թէ չէ դարեր շարունակ՝ մեր ամենադժուար պահերին, հերքով, տարածաշրջանը հսկող բոլոր գերտէրութիւններին քծնել, խնդրել ու կոտորուել, հիասթափուել, խաբել ու մեղադրել ենք բոլորին, բացի մեզանից: Բացի մեր անհեռատեսութիւնից: Բացի մեր իրար նկատմամբ կուսակցական, գաղափարական անհանդուրժողական կործանարար մեծամտութիւնից: Ու էս շփոթմունքի, հոգեվարքի մէջ միշտ մոռացել ենք Ամենակարող Աստուծոյ, ում պահածն ենք մինչեւ այսօր: Հետեւաբար մեզ անհրաժեշտ է, այլեւս պարտադրուած է ինքնամաքրուել անխտիր: Մեզ ի վերուստ տրուած է դառնալ աստուածային, արժանապատիւ ժողովուրդ: Որպէսզի գոնէ քիչ կորուստներով դուրս պրծնենք մաքուր այս փորձութիւններից:

Ինչքա՞ն պէտք է ամօթի ու խայտառակութեան խարանդ ճակատներիս ապրենք մերքին գովառողների ծիրում յայտնուած Հայաստանում ու հայ ժողովուրդ կոչուենք: Ինչքա՞ն: Մեր պապերը չեն ասել գնացէք Ռուսաստան, ռուս պաշտէք, ցնացէք, Ֆրանսիա՛՝ ֆրանսիացի պաշտէք, գնացէք Ամերիկա՛՝ ամերիկացի պաշտէք կամ եկեղեցի շինէք ու այդ քարաշէն կառոյցներին պաշտէք: Ժամանակն է հասկանալ վերջապէս, որ Պաքոյի բարբարոսական վարչախմբի եւ վերջինիս օպերատոր էրդողականական Թուրքիայի համար մեծ հաշուով չկան, առանձին վերցրած, Արցախի, Սիւնիքի, Վայոց ձորի եւ այլ խնդիրներ, այլ կայ հէնց Հայաստանի հարցը:

Դարեր շարունակ մեզ համար պետութիւն եղել են Պարսկաստանը, Օսմանեան կայսրութիւնը, ցարական Ռուսաստանը, Խորհրդային Միութիւնը, բայց ոչ Հայաստանը: Մենք այդ պետութիւնները զուգորդել ենք օրէնքի, զարգացման, հնարաւորութիւնների, փող վաստակելու, հարստանալու հետ, իսկ Հայաստանը՝ սգի, վշտի, պաթոսային կենացների, մահի, կորուստների հետ: Այն հարցին, թէ արժանաւորուող որտեղի՞ց ենք, հպարտութեամբ պատասխանել ենք «մշեցի ենք, սասունցի, վանցի, էրզրումցի», բայց ոչ երբեք արտաշատցի, վանաձորցի, գիւմրեցի, նոյեմբերեանցի, որանով լեզիտիմացիքը հարեան պետութեան ղեկավարի գառանցանքը «Արեւմտեան Ատրպէյճանի մասին»: Հիմա էլ նախընտրում ենք ապրել այլ պետութիւններում, մեր գաւակներին այնտեղի քաղաքացիներ դարձնել, բայց մահանալուց առաջ այդ նոյն գաւակներից խօսք վերցնում, որ մեզ բերեն Հայաստանում յուղարկաւորեն. ապրել այլ տեղ, մահանալ Հայաստանում: Այնինչ հարկաւոր է մէկընդմիջտ հասկանանք, ընկալենք ու սովորենք, որ Հայաստանի Հանրապետութիւնն ասուածը կեանքի մասին է, ապրելու մասին է, նոր կեանք տալու մասին է: Հայաստանի Հանրապետութիւնը աշխատելու մասին է, ստեղծագործելու, զարգացնելու, հարստանալու եւ հարստացնելու մասին է: Հայաստանի Հանրապետութիւնը երջանիկ անհատի եւ հզօր պետութեան մասին է: Հայաստանի Հանրապետութիւնն իր երազանքները, իղձերը, նպատակները, կեանքը, ապրուստը, աշխատանքը այս հողի հետ կապող մարդու մասին է:

Ատրպէյճանը փորձում է ինքնուրոյն խաղեր տալ, ԱՄՆ-ի նախագահ Թրամփին սիրաշահել ու յաղթողի կեցուածքով կարեւոր դերակատար դառնալ համաշխարհային ասպարէզում: Իսկ մեր պարագայում հետաքրքիր եւ յուսադրող իրողութիւններ են նկատուում: Եթէ մօտ կէս տարի առաջ հայ-ռուսական յարաբերութիւնների սրընթաց անկում էինք դիտարկում, ապա այսօր դրանք անելի մեղմ են: Յարաբերութիւնների այս թեթեւակի սերտացումը քաղաքական վերլուծաբան, Մերձատր Արեւելքի հարցերի փորձագէտ Ստանիսլավ Տարասովը կապում է Կրեմլում Հայաստանի գծով համակարգողի փոփոխութեան հետ: Պակաս կարեւոր չէ նաեւ այն իրողութիւնը, որ Ռուսաստանի Դաշնութեան նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տմիտրի Գոզազին փոխարինել է առաջին տեղակալ, Ռուսաստանի նախկին վարչապետ Մերկել Գիրիենքոն, որը փոփոխեան վարչախմբի ամենաազդեցիկ դեմքերից է:

Հետաքրքիր է, այսօր ակտիւ խօսակցութիւն կայ Սիւնիքի միջանցքի շուրջ: Ռուսաստանը կարծես դրոյում է կողմերին, որ արագ տրուի միջանցքը: Հարց է առաջանում՝ դա պէ՞տք է Ռուսաստանին, եթէ նա, միեւնոյն է, չի վերահսկելու այն: Կարծում ենք, որ Սիւնիքի միջանցքը ոչ մէկին էլ պէտք չէ: Ռուսաստանին այն պէտք չէ բացարձակ, որովհետեւ հիմա թուրքական աշխարհում բոլորովին այլ խաղեր են սկսում: Թուրքական աշխարհի միասնականութիւնն էլ չկայ: Երրոպան հրաժարում է Ատրպէյճանով անցնող էներգետիկ կառոյցներից: Չի-նաստանը սկսում է իր բեւեռը կառուցել Միջին Ասիայի հետ, եւ նրա համար մէկ ճանապարհ կարող է լինել՝ Միջին Ասիայով դէպի Ռուսաստան եւ Երրոպա: Սիւնիքի միջանցքով ու՛ր գնալ՝ Թուրքիա՞: Թուրքիան ներկայում համարեա պատերազմական վիճակում է, հետեւաբար այդ միջանցքը վտանգաւոր է դառնում: Այնպէս որ, այն ոչ մէկին պէտք չէ:

Ինքնին հասկանալի է, որ Հայաստանին առաւել եւս պէտք չէ, բայց յստակ է

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆէսոր

նաեւ, որ այն պէտք է Ատրպէյճանին: Սակայն յստակ է նաեւ, որ Ատրպէյճանին պէտք էր այլ պայմաններում, բայց հիմա, երբ Երրոպան հրաժարում է ֆինանսաւորել նրա էներգետիկ նախագծերը, կասպիական ռեսուրսի նշանակութիւնն ընկնում է: Երրոպան յայտարարում է, որ զարգացնելու է կանաչ էներգետիկան, իսկ Ամերիկան բոլորին դուրս է մղում երրոպական շուկայից՝ նաեւ Ատրպէյճանական եւ՝ ռուսական զազը: Այդ դէպքում հետքերի է, թէ Ալիեւը պարբերաբար ինչո՞ւ է յայտարարում է, որ այն իրենց պէտք է, ստանալու են եւ այլն: Կարծում ենք, որ այլեւս նշանակութիւն չունի, թէ իրենք ինչ են ասում: Նրանք յայտնուել են բոլորովին այլ իրավիճակում: Կովկասի երեք հանրապետութիւններից ամենաառաջադէմն ու ամենախելացին, պարզում է, Վրաստանն է: Իսկ Հայաստանն ու Ատրպէյճանն ընդամենը յայտնուել են աշխարհաքաղաքական գնացքի հետեւից վազողների դերում, որոնք փորձում են ցատկել վերջին վագոնի մէջ:



Յրգծանկար՝ Թորոյի, յատուկ «Պայքար»-ի

Նորութիւն ասած չեն լինի, եթէ նշեն, որ մենք բոլոր հարցերում հատուածական մտածողութեան եւ ծայրայեղութիւնների ժողովուրդ ենք: Այնքան էլ լաւ չենք հասկանում, որ դափնեպսակի եւ ծաղկեպսակի մնամութիւնից վախեցողը՝ հերոս չի դառնայ: Որ նաեւ ամենազանազան ժողովուրդներից մէկն ենք՝ աշխարհի փողը հայերի ձեռքում է, իսկ, ինչպէս միշտ, երկիրը կորցնելու ենք անհրաժեշտ մարդու ձեռքում փող չլինելու պատճառով: Որ իւրաքանչիւր ժողովրդի ապագան կախում է սեփական արժեհամակարգից: Ինչպիսի արժեքներ նրանք կը դաւանեն, այդպիսի ապագայ կ'ունենան եւ այլն եւ այլն:

Պատմութիւնը շատ օգտակար գիտութիւն է: Եթէ հայերը մի փոքր անելի լաւ իմանային հայոց պատմութիւնը, ապա այսօր այդքան չէին զարմանայ Հռոմի պապի եւ Վատիկանի խորքային հակահայկակականութիւնից՝ մասնաւորապէս հայասպան պետութեան՝ Ատրպէյճանի հետ ջերմ յարաբերութիւններ ունենալուց, հայոց պատմութիւնը կեղծողներին խրախուսելուց եւ հարթակ տրամադրելուց: Ատրպէյճանում հայոց ցեղասպանութեան հետքերը սրբելու ջանքերից, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ նրա ժողովրդի անվտանգութեան շահերը վաճառելու պատրաստակամութիւնից: Այս մասին անելի մանրամասն կը խօսենք մէկ ուրիշ անգամ, իսկ մեր խօսքն աւարտենք երկու կարեւոր ու խիստ արդիական մտքերով. «Որտեղ օրէնքը գործում է, այնտեղ ժողովուրդն էլ ուժեղ է»:

Մի բան էլ՝ ծառի բնի օղակներից՝ ծառի տարիքն են իմանում: Իսկ ես՝ բացւած օղակներում՝ ծառի չապրած տարիների ցան են տեսնում...

Երեւան
15. 04. 2025

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշակիր Կեօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ճըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ Աւետիքեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուս)
Զաւէն Գրիգորեան	(Սթեւը)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A.	
Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com	
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄ

Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի

Այս տարի ես երբ համախմբում եմ մեր եկեղեցիներու կամարներուն ներքե Սուրբ Զատիկի մշտանորոգ եւ Սուրբ Յարութեան աւետարեք պատգամը լսելու, մտովին կը վերյիշեմ մեր Եկեղեցոյ աւանդութեան խորքերը արմատացած Աւետարանի խորհրդատու դրոազներէն մէկը, ուր երեք կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայր Մարիամը եւ Սաղոմեն, կորուստի կսկիծով, բայց անասան հաւատքով արշալոյսին կ'ուղեւորուէին դէպի իրենց սիրելի Վարդապետի գերեզմանը՝ Անոր չարչարած մարմինը բուրաւտ խղերով օծելու:

Անհրաժեշտ է ընկալել այս ճանապարհի խորհուրդը: Այդ երեք քաջարի կանայք թելտ վշտալից եւ յուսահատ էին, բայց կը մարմնաւորէին անկոտորուն կամքի, սիրոյ ու անմնացորդ հաւատարմութեան այն կապը, որ զիրենք կը միաւորէր սրբազան առաքելութեան մէջ:

Անոնք ճամբայ ելան անորոշութիւնն ու վախը իրենց սիրտերուն, ընկղմւած լռութեան մէջ, որ կ'աղաղակէր անոնց ներքին խռովութիւնը:

Անոնք մթնշաղի մէջ կը քալէին՝ յուսահատութեան սեւ քողի ներքոյ դէպի իրենց սիրելի Վարդապետի գերեզմանը, բայց գիտէին, որ իրենց կը սպասէր անհարկու տեսարան մը՝ հսկայ վեճ մը, որ կը փակէր քարայրին մուտքը: Ան կը խորհրդանշէր անյաղքահարելի փորձութիւնները, որոնց պիտի բախէր մեզմէ իւրարաքանչիւրը:

Անոնք, այնուամենայնիւ, չիրաժարեցան այդ դժուար ճանապարհէն: Անոնց քայլերու ձայնը կ'արձագանգէր ոչ միայն վիշտ, մորմոք, այլ նաեւ լուռ, անխօս յոյս, որ նոյնիսկ կորուստի ահեղի ցաւի ներքոյ կարենային երկըրպագել Յիսուսին:

Մեր առօրեայ կեանքին մէջ ալ յաճախ կը պատահի որ խարխափինք անորոշութեան մէջ՝ փորձութիւններու եւ դժուարութիւններու ծանրութեան տակ: Մեզ շրջապատող աշխարհի մէջ կան՝ կորուստ, ցաւ ու արգելքներ, որոնք յաճախ անլուծելի կը թուին: Եւ ինչպէս այդ կանայք, այդպէս ալ մենք երբեմն կը զգանք մեր ներքին «քարերու» ճնշող ծանրութիւնը:

Մենք թէ՛ որպէս անհատներ, եւ թէ՛ որպէս ազգ կքած մեր վախերու եւ անվստահութեան բեռն, յաճախ մենք մեզ կը գտնենք կանանց նոյն իրավիճակին մէջ: Բաժանումը, հակամարտութիւններն ու ապագայի նկատմամբ անորոշութիւնը իրենց հետքը կը ձգեն մեր հաւաքական սիրտին մէջ եւ մենք կը փնտռենք յոյսի շող մթութեան մէջ:

Երեք կանանց պատմութիւնը, սակայն, յուսահատութեամբ չ'աւարտիր: Անոնք վերջապէս կը հասնին գերեզման, բայց անոնց չի դիմաւորեր մահուան լռութիւնը, այլ՝ պայծառ յոյսի լոյսը եւ նոր իրականութեան լուսաբացը: Այդ ծանր քարը, որմէ կը վախճային, այլեւս այնտեղ չէր. ան արդէն հեռացուած էր, որ խորհրդանշէր էր աստուածային միջամտութեան:

Նոյն պահուն հրեշտակը յայտնուեցաւ իրենց եւ ազդարարեց հաւատքն ու համայն աշխարհը յեղափոխող խօսքերը՝ «Ան այստեղ չէ. Ան յարութիւն առած է»: Այս վճռորոշ պահը մեր հաւատքի էութիւնն է, այն որ նոյնիսկ ամենախաւար պահուն գոյութիւն ունի նորոգման եւ փոխակերպման անսասան խոստում. խոստում, որ յենակէտ կը դառնայ այն ժամանակ, երբ ամէն ինչ անյուսալի կը թուի:

Ինչպէս կանայք յոյս գտան Յիսուսի հրաշալի յարութեամբ, այդպէս ալ մենք կոչուած ենք յոյսով լեցուելու մեր կեանքին ընթացքին՝ անկախ առկայ դժուարութիւններէն: Յոյսը անտարբեր ցանկութիւն չէ, այլ՝ գործող ուժ, որ մեզ առաջ կը մղէ, եթէ նոյնիսկ ճանապարհը բարդ ու մշուշոտ թուի:

Մեր հաւաքական կեանքի ընթացքին երբեք չմոռնանք որ Յարութիւնը միայն երկու հազար տարուան վաղեմութիւն ունեցող իրադարձութիւն չէ: Ան կենդանի իրականութիւն է, որ կը շարունակէ ծաղկիլ մեր սիրտերուն ու համայնքներու մէջ եւ վերակենդանացնել մեր ոգին ու ներշնչել մեզ գործելու:

Որպէս հայ ժողովուրդ մենք շատ լաւ գիտենք, որ փորձութիւններու եւ տառապանքի ինչպիսի ճանապարհէ անցած ենք: Սակայն անթիւ անգամներ մենք գտած ենք ուժը մոխիրներէն վեր յառնելու, վերստին կերտելու եւ վաղուան յոյսով նայելու:

Ինչպէս կանայք գերեզմանի մօտ, այնպէս ալ մենք կոչուած ենք համարձակօրէն կենալու մեր վախերուն դէմ, եւ որպէս միասնական համայնք՝ առերեսուելու մեր կեանքի «քարերուն»:

Ամէն բարի գործ, գոր կը կատարենքք ամէն անկեղծ աղօթք, գոր կը բարձրացնենք առ Աստուած. եւ իւրաքանչիւր քայլ, գոր կը ձեռնարկենք հաշտեցման եւ սիրոյ ուղղութեամբ, կրնայ մեր սիրտերէն եւ մեր աշխարհէն շարժել այդ ծանր քարերը՝ ճանապարհ հարթելով դէպի յոյս եւ ամոքում:

Այս Ս. Զատիկին, մեր սիրտերուն եւ միտքերուն մէջ Աւետարանի երեք կանանց մեզի տուած խորհուրդն է՝ մեր վիշտը վերածել յոյսի, լռութիւնը՝ ցնծութեան երգի, իսկ խաւարը՝ Քրիստոսի պայծառ լոյսի:

Թող որ մեզմէ իւրաքանչիւրը քաջութեամբ ընթանայ նոր կեանքի արշալոյսին ընդառաջ՝ վստահ ըլլալով, որ ան Ով կը յաղթ մահուան, մեզի նաեւ ուժ կու տայ յաղթահարելու մեր փորձութիւնները եւ ապրելու մեր աստուածային առաքելութեամբ:

Աղօթենք, որ այս յոյսը մարմնաւորենք մեր կեանքին մէջ, կիսուինք զայն շռայլօրէն բաշխելով մեր շրջապատին, որպէս լոյսի փարոսներ «խաւար» ժամանակներուն:

Արեւմտեան Երոպայի
Հայրապետական Պատուիրակ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Ապրիլ 24)

ՎԵՐ, ԳՈՎՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Հայոց Յեղասպանութիւնը Համաշխարհային Առաջին Պատերազմի եւ անոր յաջորդող քանի մը տարիներու ընթացքին մեր ազգային պատմութեան ամէնէն տխուր դէպքերէն մէկն է: Ամէն տարի ողջ հայութիւնը կ'ոգեկոչէ յիշատակը այն բիւրաւոր հայերուն, որոնք զոհ զացին Օսմանեան պետութեան կողմէ գործադրուած այս ցեղասպանութեան: Ամէն տարի գիտակից հայերու մտքին մէջ հարց կը ծագի, թէ ի՞նչ են մեր պարտականութիւնները Յեղասպանութեան նկատմամբ: Ստորեւ յիշենք հետեւեալ կարեւոր պարտականութիւնները.

Առաջին, յարգանքով խոնարհիլ մեր նահատակներուն յիշատակին առջեւ: Յեղասպանութեան պատմական տարեկիցներուն առիթներով, պաշտամունքով եւ հանդիսութիւններով, երգով ու խօսքով եւ այլեւայլ մշակութային ձեռնարկներով կ'ոգեկոչենք անոնց յիշատակը: Այս առիթով, խոր յուզումով կը յիշենք մեր պատմութեան ամէնէն եղեռական այս ողբերգութիւնը, Հայոց Յեղասպանութիւնը՝ մտալոյսացուած եւ գործադրուած Օսմանեան Թուրքիոյ կողմէ: Յուզումով ու վրդովմունքով կը յիշենք մեր ժողովուրդի բռնազաղթը իր երեքհազարամեայ հայրենիքէն, մեր մէկ ու կէս միլիոն գոհերն ու նահատակները, այն նիւթական եւ մշակութային ահաւոր կորուստը, որուն տարողութիւնը ազգովին կը զգանք ատելի քան դար մը ետք, կորուստ մը որ անհաշուելի եւ անչափելի է:

Երկրորդ, մեր սրտագին երախտագիտութիւնը կը յայտնենք առ Աստուած՝ Յեղասպանութենէն վերապրողներուն համար: Թէ՛ մարդկայնօրէն հնարաւոր չէ բացատրել թէ ինչու՞ համար պատահեցաւ այդ աղէտը, թէ ինչու՞ համար մեր անմեղ ժողովուրդին բաժին եղաւ այդչափ աներեւակայելի չարիք: Սակայն իրագել ենք այն իրողութեան որ ասիկա աստուածային պատիժ մը չէր, այլ մարդկային ոճիր մը ի գործ դրուած անգութ եւ վայրագ մարդոց կողմէ: Ի հեճուկս այս ամէնուն, հայ ժողովուրդը, ինչպէս անցեալ դարերուն, Մեծ Եղեռնի տարիներուն ալ, կառչած մնաց իր հաւատքին, եւ աստուածատուր զօրութեամբ ոտքի կանգնեցաւ ու շարունակեց ապրիլ եւ ստեղծագործել: Հայ ժողովուրդինն է եղեր նաեւ Եզեկիէլ մարգարէի չորցած ոսկորներու յարութեան տեսիլը: Ինչպէս Գողգոթայէն անդին տեղի ունեցաւ Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը, մենք ալ ազգովին վկայեցինք թէ Տէր Զօրներէն եւ Միջագետքի անապատներէն անդին ալ տեղի ունեցաւ մեր ժողովուրդին յաղթական յարութիւնը:

Յրորող, մեր երախտագիտութիւնը յայտնել բոլոր անոնց որոնք օգնութեան ձեռք կարկանդակեցին Հայոց Յեղասպանութենէն վերապրողներուն: Ինչպէ՞ս կրնանք մոռնալ արաբ հիւրասէր եւ հայասէր ժողովուրդները, որոնք լայնօրէն բացին իրենց դռները գաղթական հայ ժողովուրդին առջեւ եւ ջերմ ու գուրգուրտ վերաբերում ցոյց տուին անոնց: Ինչպէ՞ս կրնանք մոռնալ ամերիկացի բարերար ժողովուրդը, որ իր «Մերձատուր Արեւելքի Նպաստամատոյց»ով միլիոնաւոր տոլարներով օգնեց հայ ժողովուրդին: Ինչպէ՞ս կրնանք մոռնալ Եւրոպական բարեսիրական, մարդասիրական եւ միսիոնարական կազմակերպութիւնները, որոնք մեր վիրաւոր ու արհմաքամ «Մնացորդացի»ին համար եղան ճշմարիտ «Բարի Սամարացի»ներ: Ամէն Յեղասպանութեան ոգեկոչում յիշեցում մը հանդիսանալու է մեզի համար, թէ քաղցր պարտք ու պարտականութիւն համարելու ենք մեր երախտագիտութիւնը յայտնելու մեր անցեալի բոլոր բարերարներուն:

Չորրորդ, յիշեցնելու ենք համայն աշխարհիս, որ որեւէ ցեղասպանութիւն՝ քրեական ոճիր մըն է մարդկութեան դէմ գործուած: Օսման երիտասարդ թուրքերու կողմէ ի գործ դրուած ցեղասպանութիւնը ոչ միայն հայ ազգին դէմ, այլ ամբողջ մարդկութեան դէմ աններելի ոճիր մըն էր: Ամէն ոգեկոչում դիպուկ յիշեցում մը ըլլալու է մեզի, դատաւարտելու բոլոր այն ազգերը, որոնք ցեղասպանութեան ոճիրը կը գործեն այլ ազգերու դէմ: Եւ մենք կարեկցելու ենք բոլոր անոնց, որոնք անմեղ գոհեր են մնամօրինակ անմարդկային արարքներու:

Հինգերորդ, յայտարարելու թէ որպէս հայրողիներ, տէր ու պաշտպան պիտի մնանք Հայ Դատին: Պէտք է հաւատանք որ Հայ Դատին պահանջատիրութեան հիմնաքարը անժամանցելի արդարութիւնն է: Այդ պատճառով շարունակելու ենք մեր պայքարը յանուն հայ ժողովուրդի իրաւունքներուն: Անտարակոյս, մեր Դատի յաջողութիւնը երկար ժամանակի կը կարօտի, սակայն պէտք չէ յուսալքուիմք: Յաճախ ազգերու իրաւունքները մէկ սերունդի ջանքերով ձեռք չեն ձգուիր: Ամէն սերունդ ունի իր դերն ու պարտքը: Մեր դատի պաշտպանութեան ծանր հրետանին հայութեան միացեալ կամքն ու հետեողական աշխատանքն է:

Վեցերորդ, ուխտելու ենք հաւատարիմ մնալ մեր հայ քրիստոնեայ ինքնութեան: Խորապէս կը հաւատանք որ զօրաւոր ազգ մը ըլլալու համար անհրաժեշտ է մեր քրիստոնէական եւ հայեցի արժէքները պահել եւ զօրացնել: Դարերու ընթացքին, մեր քրիստոնէական հաւատքին ու մեր մշակութային արժէքներուն շնորհիւ է, որ կրցած ենք դիմակալել ահաւոր աղէտներ, կոտորածներ եւ ցեղասպանութիւններ եւ կրցած ենք անոնցմէ դուրս գալ եւ գոյատեւել: Պէտք է հաւատանք նաեւ որ Յեղասպանութեան ոգեկոչումներու նկատմամբ մեր տարած աշխատանքներէն անբաժան, ունինք ուրիշ կարեւոր պարտականութիւններ՝ նոր սերունդները քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութեամբ թրծելու: Այդ առաջադրութեամբ անհրաժեշտ կը համարենք զանոնք մեծցնել քրիստոնէական սկզբունքներով, հայրենիքի եւ հայ մշակոյթի սիրով:

Ապահովաբար, այս ազնիւ առաքելութիւններու կոչումով ապրող նոր սերունդներ՝ համադրուած ու համակարգուած աշխատանքով՝ պիտի յաջողին Հայ Դատի խիզախ երթը իր յաջող աւարտին հասցնելու:

Արդ, Յեղասպանութեան տարեդարձները դառնալու են մեզի ոչ միայն ոգեկոչումի, այլ նաեւ, մանաւանդ, վերանորոգումի առիթներ՝ ապրելու այն արժէքներով եւ սկզբունքներով որոնց համար մեր նախահայրերը նահատակուեցան:

Տիգրան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԱՆՉԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

Անկախ Բեմ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ԳԵՈՐԳ ՀԱԼԷՊԵԱՆ

Հայոց ազգային գաղափարախօսության առանցքային հիմնադրոյթներն է՝ Հայաստանի անկախ հանրապետության ստեղծումը, ամրապնդումը եւ հզորացումը՝ որպէս Անկախ Հայաստանի իրականացման նախապայման, որպէս հայ ժողովուրդի գոյապահպանման եւ զարգացման երաշխիք: Հայ ժողովուրդը թեւակոխած էր Մեծ Երազի իրականացման առաջին փուլը՝ 1991-ին հռչակած էր Հայաստանի վերանկախացումը:

Հայաստանի Հանրապետութիւնը թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին քաղաքականութեան բնագաւառներում մէջ պէտք էր դեկավարուէր ազգային գաղափարախօսութեան հիմնադրոյթներով: Ազգը եւ ազգային պետութիւնը կրնան գոյատեւել միայն այն պարագային եթէ անոնք կը դեկավարուին ազգային գաղափարախօսութեամբ:

Հայաստանի Հանրապետութիւնը պէտք էր ունենար ազգային գաղափարախօսութեան բխող ռազմավարական եւ մարտավարական ծրագիրներ՝ Ազգային Ծրագիր կամ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ: Եթէ մարտավարական ծրագիրը ենթակուի ինչ որ գործնապաշտ (pragmatic) գործընթացներու եւ լրամշակուի իրադարձութիւններու զարգացման եւ փոփոխութիւններուն համընթաց, եւ ունենայ փոխզիջումներու տարբերակներ մարտավարական հարցերու հետ կապուած, ապա ռազմավարական ծրագիրը՝ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՔՆԻՇ-ԽԱՆՈՒԹԻՒՆԸ փոփոխութեան ենթակայ չէ:

Հայոց պետականութիւնը պէտք էր ունենար ազգային հզօր տնտեսութիւն՝ պայմանադրուած Հայաստանի աշխարհաքաղաքական անկախատեսելի իրավիճակներով եւ պատմական խնդիրներով: Ի տես Հայաստանի այս պայմաններուն, յատուկ նշանակութիւն պէտք էր ստանար խորունկ եւ բազմակողմանի մշակուած ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ մշակումը՝ որու առանցքային հիմնադրոյթները պիտի ըլլային հզօր ազգային բանակը եւ արդիական ռազմական արդիւնաբերութիւնը: Ազգային բանակի յաղթական ոգին պէտք էր կոփուէր կրթական համակարգին մէջ: Այդ պատճառով, կրթական համակարգը իր բովանդակութեամբ պէտք է ըլլար ԱԶԳԱՅԻՆ եւ ռազմահայրենասիրական, կրթութիւնը պէտք էր առանցքային տեղ գրաւէր պետական կրթական համակարգին մէջ:

Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը պէտք էր ուղղորդուէր երկրի աշխարհաքաղաքական եւ պատմական գործօնները հաշուի առնելով: Պատմութեան ներկայ փուլին մէջ կարեւորագոյն նշանակութիւն կը ստանայ այն հարցը, թէ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան մէջ ինչպիսի՞ տեղ եւ դեր պէտք է յատկացուէր Հայոց Դատին, Հայոց Յեղասպանութեան եւ Սփիւռքի հիմնախնդիրներուն:

Ա) Հայկական Հարցը Հայաստանի Արտաքին Քաղաքականութեան մէջ:

Նկատի առնելով չափազանց բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը եւ աննպաստ պայմանները, Հայաստանի Հանրապետութիւնը պաշտօնապէս Հայկական Հարցը պէտք էր հռչակէր հայոց ազգային գաղափարախօսութեան ռազմավարական ծրագրի հիմնախնդիր, զայն չներառելով մարտավարական ծրագրի մէջ, չդարձնելով այն պետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգ: Պէտք է շարունակուէր անգիջում պայքարը Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման, միաժամանակ բարձրացնելով Ատրպէյճանի կողմէ բռնագրաւուած Նախիջեւանի եւ Շարուրի հարցերը: Միջազգայնօրէն պէտք էր պահանջել եւ հետապնդել 1921 թուականի Մարտի 16-ի ռուս-թրքական տխրահռչակ պայմանագրի վերանայումը կամ չեղարկումը՝ Նախիջեւանին վերաբերող յօդուածը եւ նոյն թուականի Հոկտեմբեր 13-ի Կարսի պայմանագիրը:

Անհրաժեշտ էր նաեւ լայն քարոզչութիւն ծաւալել Ատրպէյճանի կողմէ կազմակերպուած հայոց ցեղասպանութեան միջազգային հանրութեան ծանօթացնելու ուղղութեամբ, որ աշխարհին ներկայացուած է խեղափոխուած ձեւով, որպէս «ժողովուրդի ատրպէյճանցիներու ցեղասպանութիւն»:

Հայաստանի Հանրապետութիւնը Հայկական Հարցը մարտավարական նկատառումներով չդարձնելով արտաքին քաղաքականութեան օրակարգ, այնուամենայնիւ, հսկայական աշխատանք պէտք էր տանէր այդ հիմնահարցի տեղեկատուական եւ քարոզչական մեթոտան միջազգային եւ ազգային-քաղաքական բարձր մակարդակով իրականացնելու համար: Պէտք է ստեղծուէր ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ-ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՃԱՌ, որու նպատակը պէտք է ըլլար՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ: Այս կաճառը պէտք էր մշակէր Հայկական Հարցի քարոզչութեան մեթոտներն ու ձեւերը, նաեւ, այս կաճառին մէջ պէտք էր ընդգրկուէին հայ եւ այլ ազգի արհեստավարժ մասնագէտներ: Պէտք էր հրաւիրել Համաշխարհային Հայկական Համագումար, որ իր վրայ պէտք է վերցնէր Հայկական Հարցի ուղղութեամբ տարուող բոլոր աշխատանքներու կազմակերպումը, համակարգումը եւ ֆինանսատրուումը: Այս համագումարի աշխատանքներուն իրենց գործուն մասնակցութեամբ պէտք էր հանդէս գային նաեւ Հայաստանի իշխանութիւնները:

Բ) Հայոց Յեղասպանութիւնը՝ Հայաստանի Արտաքին Քաղաքականութեան մէջ:

Հայկական Հարցի համար մղուող պայքարին քարոզչութիւնն ու դեկավարութիւնը վստահելով Համաշխարհային Հայկական Համագումարին,

Հայաստանի Հանրապետութիւնը այդ բնագաւառին մէջ իր հիմնական խնդիրը պէտք է համարէր Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումն ու հասնիլը: Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումն ու այդ իրողութիւնը ՄԱԿ-ի կողմէ ընդունուելէ յետոյ՝ հզօրացած Հայաստանի Հանրապետութիւնը կը մտնէր Հայկական Հարցի համար մղուող պայքարի երկրորդ փուլ՝ պաշտօնապէս մարտավարական ծրագրի, պետութեան արտաքին քաղաքականութեան գործընթացի մէջ մտցնելով Հայկական Հարցը: Այսպէսով, պատմութեան ներկայ փուլին, Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է հետեւողականօրէն պայքարէր հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, որ հիմք կը հանդիսանար պետականօրէն Հայկական Հարցի համար մղուող պայքարի երկրորդ փուլին անցնելու համար:

Գ) Սփիւռքը՝ Հայաստանի Արտաքին Քաղաքականութեան մէջ:

Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան հայեցակարգին մէջ պէտք էր առանձնապատու տեղ գրաւէր նաեւ Սփիւռքը՝ որպէս Հայկական Հարցի եւ Յեղասպանութեան խնդրի բաղկացուցիչ մաս, որպէս ցեղասպանութեան արդիւնք:

Այստեղ կարեւոր կը նկատենք արձանագրել հետեւեալ նկատառումները.-

- 1) Միջազգային ասպարէզին մէջ Հայկական Հարցին կրողը եւ դրօշակակիրը պէտք է ըլլայ Սփիւռքը: Եթէ պատմութեան արդի փուլին մէջ Հայաստանի Հանրապետութիւնը, ելլելով առարկայական եւ իրատեսական աննպաստ պայմաններէն, մարտավարական նկատառումներով նպատակաւարմար չի համարէր իր ձեռքը վերցնել Հայկական Հարցի համար մղուող պայքարը, ապա այդ պայքարի դրօշակակիրը պէտք է դառնայ Սփիւռքը:
- 2) Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման համար կարեւոր դեր ունի կատարելիք նաեւ Սփիւռքը: Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի միացեալ ջանքերով, արտաքին թէ՛ ներքին ամբողջ ներուժի օգտագործմամբ միայն հնարաւոր կ'ըլլայ հասնիլ ցեղասպանութեան միջազգային ճանաչման:
- 3) Վերոյիշեալ խնդիրները համազգային ուժերով լուծելու համար անհրաժեշտ էր որ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի հարցերով զբաղուող (նախարարութիւն, յանձնակատար) մարմինը դեկավարուէր ազգային մտաւորականութեան ներկայացուցիչներէ, որոնց խօսքն ու հեղինակութիւնը պատկառելի եւ ընդունելի պիտի ըլլար Սփիւռքի համար:

Վերոնշեալ խնդիրներու իրականացմամբ՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը կարելիութիւն կը ստանար Հայոց Յեղասպանութեան եւ Հայկական Հարցի միջազգային ճանաչման համար մղուող պայքարին լիովին օգտագործել Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր ուժերը եւ հնարաւորութիւնները: Այսպիսով, հայ ժողովուրդը կը համոզուէր որ Հայաստանի Հանրապետութեան դեկավարութիւնը կը վարէ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂՎՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԲԻՄԱՆՈՒԹԵԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԱԾ-ԽՈՒԹԵԱՆ եւ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՉՕՐԱՅՄԱՆ:

Իսկ ելլելով մեր երկրի ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ շահերէն, Հայաստանի Հանրապետութիւնը բոլոր պարագաներուն պէտք էր ընտրէր յուսալի ռազմավարական դաշնակիցներ իր անվտանգութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ ինքնիշխանութիւնը ամրապնդելու համար: Պատմութեան հրամայականով, Հայաստանի Հանրապետութիւնը պէտք էր վարէր հակակշիռ դաշինքներու քաղաքականութիւն: Հակաթուրքական դաշինքին մէջ իրենց տեղը պէտք է ունենային, Հայաստանը, Յունաստանը, Կիպրոսը, Մերսիսիւն, Պուլկարիան, Իրանը, Չինաստանը, Եգիպտոսը, Միացեալ Նահանգները, Ֆրանսան եւ այլն:

Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան հայեցակարգին մէջ կարեւորագոյն տեղ պէտք էր գրաւէր մշակոյթի, գիտութեան եւ կրթական համակարգերը: Այս համակարգերը պարտադիր պէտք էր որ գտնուէին պետութեան հոգատարութեան ներքոյ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետութեան հիմնական խնդիրը արդի ժամանակահատուածին մէջ՝ հայ անկախ պետականութեան ամրապնդումն ու հզօրացումն էր, պետութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան հայեցակարգերու մշակումն ու իրագործումը, հայ մշակոյթի, գիտութեան, տնտեսութեան եւ արտաքին քաղաքականութեան բազմակողմանիացման, կրթական համակարգերու եւ հայոց բանակի արդիականացման եւ զարգացման պայմաններու ստեղծումը:

Հայաստանի Հանրապետութեան ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ այն է, որ ան կ'ապահովէ հայ ժողովուրդի եւ հայ պետականութեան գոյատեւումն ու հետագայ զարգացումը եւ միաժամանակ հիմնակէտ կը հանդիսանայ Ազատ եւ Ինքնիշխան Հայաստանի գոյատեւման եւ բարգաւաճման համար:

Լուս Անճեղլու

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԵՒ ԱՌԿԱՅ ԲԱՐԴ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍԱԳՕ ԱՐԵՄՆ

Բարդ գործընթացները կապուած Հարաւային Կովկասին «քուն ու դադար» չունին: Դիշոյ է, որ վերջին ամիսներուն Հարւ. Կովկասի մէջ առկայ տագնապներուն հիմնական առանցքը Իրանն էր, սակայն ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամի կողմէ որդեգրուած քաղաքականութեան շնորհիւ, կարծէք թէ, գոնէ այս փուլին օրակարգէ դուրս եկաւ Իրանը հարուածելու հիմնահարցը, որ բոլոր առումներով մեծ վտանգներ պիտի բերէր Հայաստանին ու հետեւաբար ամբողջ հայութեան:



Այս բոլորով հանդերձ, եթէ շրջագիծը աւելի փոքրացնենք պիտի նկատենք, որ հակառակ Պաքուի առաջ մղած հայատեսաց քաղաքականութեան Ալիեի սկսած է տարբեր եղանակներով արտայայտուիլ կապուած մանաւանդ ճանապարհներու եւ հաղորդակցութեանց խնդրին:

Իրանի հանդէպ Պաքուի ունեցած մօտեցումները առաջուան շեշտադրումները չունին եւ երկու երկիրներու բարձրաստիճան ղեկավարութիւնը «անկաշկանդ» շփումի մէջ է, իսկ Ատրպէյճանի նախագահը, որ տարբեր առիթներով Հայաստանի ուղղութեամբ սլաքներ կ'արձակէր եւ յաճախակիօրէն կը խօսէր «Ձանգեզուրի միջանցք»ի անյետաձգելիութեան եւ կարեւորութեան մասին, այսօր որդեգրած է նոր «ընտրանք» մը, որուն հիմնական գիծը կը խօսի դէպի Նախիջուան Իրանի վրայով ցամաքային կապ ունենալու այլընտրանքի մը մասին:

Դիշոյ է, որ Ալիեի խօսքերը արժանահասաւ չեն, սակայն աւելի քան պարզ է, որ ան մատնուած է որոշակի ճնշումներու (մանաւանդ Արեւմուտքէն) ու այդ առումով ալ կը փորձէ հակազդել ու իր խաղը առաջ տանիլ Իրանի վրայով:

Իրանցիք, որ շատ լաւ կը դիտարկեն ստեղծուած իրավիճակը կը հասկընան նաեւ, որ վերջին ամիսներուն Ալիեի «կտրական ոչ» մը ըսած կրնայ ըլլալ Իսրայէլին, կապուած իր տարածքներուն վրայով Իրանի դէմ ռազմական «արկածախնդրութիւն» մը կատարելու միտումներուն ու այս բոլորը կը կատարուին այն պահուն, երբ Հարւ. Կովկասի երկու հիմնական խաղացողները՝ ԱՄՆ-ն ու Իրանը նստած են բանակցութեան սեղանին:

Այս ամբողջական խաղին մաս կը կազմէ նաեւ Հայաստանը, որ առ երեւոյթ չունի անցեալի «շրջանային գործօն» ըլլալու հանգամանքը, բայց անոր հանդէպ կը շարունակէ աճիլ միջազգային որոշակի հետաքրքրութիւն մը, որ նաեւ պայմանաւորուած է շրջանին մէջ նոր հաւասարակշռութիւն կերտելու օրինաչափութեամբ:

Մինչեւ որ կրնայ հասնիլ Արեւմուտքի հետաքրքրութիւնը կամ ԱՄՆ-ի նեցուկը Հայաստանին տակաւին պարզ չէ, սակայն կայ ենթադրութիւն, որ Միացեալ Նահանգներ մշտական կերպով կը փորձէ զսպել Ալիեի ու այդ առումով ալ պաշտօնական Երեւանին ընծայած է որոշակի վստահեցումներ:

Այստեղ անշուշտ կը շարունակէ Հայաստանի եւ առհասարակ հայկական օրակարգին մէջ կենսական օրակարգ հանդիսանալ Հայաստան-Ռուսաստան յարաբերութեանց ընդհանուր պատկերը, որ կարգ մը փորձագետներու կարծիքով կը շարունակէ բոլորէլ որոշակի լարուածութեան մը ձեւաչափը:



Այլ խօսքով, Հայաստանի վարչապետը, որ ամիսներ առաջ բաւական «կրակոտ» ոճով կը խօսէր Երեւան-Մոսկուա յարաբերութեանց մասին, այսօր արդէն իսկ հրապարակ հանած է բոլորովին նոր խօսք մը, որ ինքնին պատրաստութիւն մը կը համարուի վերջինիս յառաջիկայ Մայիս ամսուան ընթացքին դէպի Մոսկուա նախատեսուած այցելութեան:

Ի վերջոյ շրջանին մէջ այս մեծ լարուածութիւնը կրնայ ապահով փուլ մը մտնել միայն այն պարագային, երբ մէկ կողմէ Ռուսիա եւ Միւս կողմէ Ռեքրանիա նստին համաձայնութեան մը սեղանին գլխատր «հովանաւոր» կամ «իրաւարար» ունենալով Միացեալ Նահանգները:

Միայն այդ պարագային այսօր երեւոյթ բաւական «խառն» ջուրերը կըրնան խաղաղիլ ու Հարւ. Կովկասը լիարժէք կերպով մտնէ հանդարտութեան նոր եւ հաստատուն փուլ մը:

Թէ ո՞վ պիտի ըլլայ հիմնական թելադրողը այդ պարագային դեռ պարզ չէ, բայց եւ այնպէս կայ մեծ հաւանականութիւն, որ Ռուսաստան վերադառնայ նոր դերակատարութեան մը, իր ձեռքերուն ունենալով Ամերիկեան «օրհնութիւն մը»:

Ամէն պարագայի Հարաւային Կովկասի մէջ տիրող ընդհանուր իրավիճակին մասին աւելի խորքային ներկայացնելու մտօք ստորեւ կը ներկայացնեն ամերիկահայ քաղաքական գիտութիւններու թեկնածու դոկտ. Սահակ Անտէքեանի լիբանանեան «Ալ Նահար» պարբերականին մէջ տպագրուած ուշագրաւ յօդուածին կարեւոր մէկ հատուածը:

Տեսկէտ ամերիկահայ քաղաքագէտ Դոկտ. Սահակ Անտէքեանէն

«Կովկասի աշխարհաքաղաքական փոփոխութիւնները» ընդհանուր խոսքերին տակ Դոկտ. Սահակ Անտէքեան կը գրէ՝

«Օրերս, թէ՛ Ռուսիոյ եւ Իրանի մէկ կողմէ եւ թէ՛ Հայաստանի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու միւս կողմէ վերջին համաձայնագիրներուն ֆոնին, Միացեալ Նահանգներու Աթլանթիկ քաղաքէն միջազգային տագնապներու կառավարման ակադեմիկոս եւ ռազմագէտ դոկտ. Սահակ Անտէքեան, հրապարակում մը կատարած է «Ալ Նահար» պարբերաբերին մէջ, ուր անդրադարձած Կովկասի մէջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխութիւններուն նաեւ անոնց ազդեցութեան Հայաստանի վրայ: Յօդուածի կարեւորութեան համար «Արեւելք» քարգմանաբար կը ներկայացանէ այն իր ընթերցողներուն:



Դոկտ. Անտէքեան մասնատրապէս կը գրէ:

«Լեռնային Ղարաբաղի (Արցախի) 2020-ի պատերազմէն ետք, Կովկասի տարածաշրջանը դաշտ դարձաւ այնպիսի քաղաքական պայքարի, որ տեսնուած չէր Երկրորդ համաշխարհային պատերազմէն ի վեր: 2020-ին, Հայաստանը եւ Ղարաբաղի հայերը պարտուեցան Ատրպէյճանի հետ պատերազմի ընթացքին, մինչ ռուսերը կռնակ դարձուցին իրենց պատմական դաշնակիցին՝ յօգուտ Ատրպէյճանի, որուն ետեւը կանգնած էր Թուրքիան՝ Ռուսիոյ նոր բարեկամ դաշնակիցը: Նախապէս քննարկած էի Արցախի պատերազմի հետեւանքով հայ-ռուսական յարաբերութիւններու վատթարացման հարցը հեռատեսիլային եթերով որոշ ակադեմիկոս ընկերներու հետ, եւ շեշտած, որ պատճառահետեւանքային փոփոխութիւնը (the direction of causation), Հայաստանի արտաքին քաղաքականութեան փոփոխութիւնը եւ ի մասնաւորի դէպի Միացեալ Նահանգներ եւ արեւմուտք միտումը, հետեւանքն են Ռուսիոյ Հայաստանէն հրաժարումին յօգուտ իր շահերուն Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ, մինչդեռ որոշ գործընկերներ, կը կարծէին, որ ընդհակառակը, Ռուսիա լքեց Հայաստանը՝ վերջինիս արեւմուտքի եւ Միացեալ Նահանգներու գիրկը երթալու պատճառաւ: Մուրիոյ վերջին իրադարձութիւններէն ետք, երբ Ռուսիա լքեց իր պատմական դաշնակիցը՝ Պաշար Ասատը յօգուտ Թուրքիոյ եւ անոր ենթակայութեան տակ գործող խմբաւորումներուն արդէն շատ պարզ դարձաւ, որ Ռուսիան, նախագահ Փութինի օրօք, սկսաւ որդեգրել քաղաքական գործնապաշտութիւն՝ հիմնուելով իրապաշտ դպրոցին վրայ (Realism), ի հեճուկս Խորհրդային Միութեան մօտեցումներուն, որ երեւելի դարձած էին «Պաղ պատերազմ»ի ամբողջ տեւողութեան: Այս «գործնապաշտութիւն»ը ակնյայտօրէն երեւան կու գայ Ռուսիոյ քաղաքականութեան մէջ իր ասանդակաւ դաշնակիցներուն հանդէպ. Ռուսիա այլեւ չի տատանսիր ամրապնդելու իր յարաբերութիւնները հակառակորդներուն հետ, երբ այդ յարաբերութիւնները կը յանգեցնեն քաղաքական, տնտեսական եւ ռազմական աւելի մեծ օգուտներու: Այսպիսով, տեսանք Մոսկուա-Անգարա-Պաքու մերձեցում Կովկասի մէջ, Հայաստանի եւ Իրանի հաշտոյն, իսկ Միջին Արեւելքի մէջ՝ Թուրքիոյ հետ սերտ համագործակցութիւն ի հեճուկս Ասատեան վարչակարգին եւ ռեժիմին եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան շահերուն ու ներկայութեան:




Ի դէպ, Իրան շատ աւելի պէտք ունի Ռուսիոյ քան վերջինս Իրանին եւ այդ քանի մը պատճառներով. Իրան պէտք ունի «դուրս գալու» իր վրայ պարտադրուած միջազգային մեկուսացումէն եւ մեղմելու Արեւմուտքի կողմէ իրեն նկատմամբ կիրառուած պատժամիջոցներու հետեւանքներու ազդեցութիւնը: Միւս կողմէ, Ռուսիա կը նախընտրէ գործ ունենալ Թուրքիոյ հետ զանազան պատճառներով՝ Թուրքիան ՆԱԹՕ-ի անդամ է, հետեւաբար Թուրքիա-Ռուսիա մերձեցումը «կը զայրացնէ» ՆԱԹՕ-ի երկիրները, նաեւ Թուրքիան կը ներկայացնէ «ծարաւ շուկայ» մը ուժանիւթի, որ Ռուսիան առատ ունի, եւ անոր անհրաժեշտ են նոր շուկաներ՝ սպառելու ուժանիւթը, եւ փոխարինելու եւրոպական շուկաները, որոնք հրաժարած են ռուսական ուժանիւթէն 2022-ի ուրբանական պատերազմէն ետք: Եւ ի վերջոյ Թուրքիան այն դուռն է, ուրկէ Ռուսիան հնարաւորութիւն ունի մուտք գործելու եւրոպական շուկայ շրջանցելով կիրառուած պատժամիջոցները առանց կասկածներ առաջացնելու»:



ՈՒԹ ՏԱՍՆԱՄԵԱԿ ԵՏՔ ԹԵՔԵԱՆՑԻՆԵՐ ԵՐԿԻՂԱԾՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԽՈՆԱՐՀԻՆ «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆ»ԻՆ ՎԱՍԱԿԻՆ ԱՌՋԵԻ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՊԱՅՏՈՒԿ ՉԱԼԱՅՃԵԱՆ



Ալեոսի Տիպան ընթերցեց Վ. Թեքեանի խմբագրականներն՝ «Մեր Երիտասարդները» գրութիւնը, որմէ ետք հանգամանօրէն ներկայացուց օրուան բանախօս, ինքնին բանաստեղծ, ՀԲԸՄ-ի «Խօսնակ» պարբերականի խմբագիր՝ Կարն. Համբիկ Մարտիրոսեանը:



Հայոց բազմադարեայ պատմութիւնը լի է ազգային ողբերգութեան էջերով, սակայն ամենէն եղերական էջերը նուիրուած են հայոց ցեղասպանութեան, որու ընթացքին ոչ միայն մենք ունեցանք միլիոնաւոր նահատակներ, այլեւ թուրքի եաթաղանին զոհ զացին երիտասարդ հայ գրողներ ու վեց հարիւրէ աւելի մտաւորականներ: Շատ քիչերն են որ երկրէն դուրս ըլլալու պատճառով չենթարկուեցան թուրքին կեռ եաթաղանին, ինչպէս Երուանդ Օտեան, Յակոբ Օշական, Վահան Թեքեան, Կոստան Չարեան, Ռէթնո Պերպերեան եւ ուրիշներ:

Վահան Թեքեանի կեանքն ու գործունէութիւնը աւելի քան կէս ժամ հիասքանչ կերպով ներկայացուց հանդիսականներուն օրուան բանախօս Կարն. Մարտիրոսեան, իսկ ներկաները հիացումով ըմբռնեցին Թեքեան բանաստեղծին ոչ շատ հանրածանօթ գործունէութիւնը, որ ան ծաւալած էր Երուսալայի տարբեր մայրաքաղաքներուն մէջ, Օսմանեան կայսրութեան տարածքին, Մերձաւոր Արեւելքի, Եգիպտոսի եւ վերջապէս աշխարհի տարածքին սփռուած հայկական սփիւռքին մէջ:

Հակառակ որ Համիտեան բռնակալութեան անկումէն ետք Վահան Թեքեան կը վերադառնայ Կ. Պոլիս, ու կը սկսի գործուն մասնակցութիւն բերել ազգային-հասարակական կեանքին, հակառակ որ իր նախասիրած երկու ասպարէզներով կը կլանուի, թէ՛ «Ժողովուրդի Չայն»ը խմբագրելու աշխատանքին եւ թէ՛ Կեդրոնական վարժարանի տնօրէնութիւնը ստանձնելով, սակայն Մեծ եղեռնէն տարի մը առաջ, կարծես նախախնամութեան կանչին անսպով, կը մեկնի Եգիպտոս ու կը ստանձնէ «Արեւ» թերթի խմբագրութիւնը:

Հանդէսի գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցաւ արուեստագիտուհի Միլի Բիւրիքեան, որ իր սփրանօ յուզական խորութեամբ ձայնով «դէպի երկինք բարձրացուց» «Եկեղեցին հայկական» բանաստեղծութիւնը, դաշնամուրի ընկերակցութեամբ գաղութիս տաղանդաւոր դաշնակահարուհի Մարալ Թալաթիեան Առնէլեանի:

Կեանք մը ամբողջ հայ մամուլին, իմա ռամկավար մամուլին, հայ գրականութեան ու ազգային կեանքին նուիրուած Վահան Թեքեանի ծաւալած գործունէութիւնը յարգանքի արժանի կը դառնայ համայն հայութեան: Չուր տեղ չէ որ 1947-ին, երբ Պէյրութի մէջ հիմը կը դրուէր ՌԱԿ-ի հովանաւորութիւնը վայելող մշակութային միութեան, անվարան այն կոչուեցաւ «Բանաստեղծութեան իշխան»-ի անունով՝ Թեքեան Մշակութային Միութիւն:



Շնորհաւորելի է ԹՄՄ «Եւրօ Պենտ»-ի վաստակաշատ մայրաքաղաք, սաքսֆոնահար Վիգէն Չալեանի երաժշտական ստեղծագործութիւնը: Ան պատրաստած էր նաեւ ասմունքի հետ ներկայացուած տուտուկի երաժշտութիւնը:

Թեքեան Մշակութային Միութեան Լիբանանի Տեղական վարչութիւնը 4 Ապրիլ 2025-ի երեկոյեան, Թեքեան կեդրոնի 7-րդ յարկի հանդիսասրահին մէջ մեծ շուքով նշեց «Բանաստեղծութեան իշխան», անմահն Վահան Թեքեանի մահուան 80-ամեակը: Թեքեան հրապարակագիրն ու բանաստեղծը վախճանած է Գահիրէի մէջ 4 Ապրիլ 1945-ին, որուն աճիւնը ցարդ կը հանգչի Գահիրէի հայկական գերեզմանատան մէջ:

Գնահատելի էր ներկայութիւնը Թեքեան Վարժարանի բարձր դասարաններու աշակերտութեան, որոնք համակ լրջութեամբ ըմբռնեցին Վահան Թեքեան գլխագիր մարդու կեանքին մանրա-

Բանաստեղծին, ազգային պատուական գործիչին յիշատակը յարգելու համար հանդիսութեան ներկայ գտնուած էին յիբանանահայ քաղաքական գործիչներ, երաժշտասէրներ, գաղափարի ընկերներ ու մշակութասէր հասարակութիւնը:



Հայրենիքով ու հայրենասիրութեամբ տոգորուող բանաստեղծին մահուրնէ ուր տասնամեակ ետք արժանապէս պատուոյ տուրք կը մատուցուէր հայ մտաւորականի մը, որ իր համակ կեանքը նուիրած էր հայ ազգին, գրականութեան, կրթական ասպարէզին, լրագրութեան, որբահաւաքին ու որբերու կրթութեան:

մասնութիւնները: Յուցադրուեցան նաեւ բանաստեղծին ակնոցները եւ իր մտերիմ գրչընկեր Միքայէլ Կիրճեանի գոյժը, գրուած Թեքեանի մահուան առիթով: Վահան Թեքեան հայ մարդը որ ապրած էր մեր ժողովուրդի տառապանքը ու զայն յանձնած էր թուրքին բանաստեղծութեամբ եւ խմբագրականներով:

Օրուան հանդիսավարն էր Վահան Թեքեան վարժարանի հայերէն լեզուի ուսուցիչ Ալեոսի Տիպան: Ապա յաւուր պատշաճի բացման խօսքով ողջունեց բոլորին ներկայութիւնը խոստմնալից երիտասարդուհի Գարէն Բարսեղեան: Ողջոյնի հակիրճ խօսքերէն ետք, համալսարանական տաղանդաւոր ասմունքող՝ Վարդի Սալխանեան ներկայացուց Թեքեանի բանաստեղծութենէն զոհարներ: Այնուհետեւ երիտասարդ մտաւորական ու մանկավարժ

Սոյն երեկոյթի յաջողութիւնը անգամ մը եւս կը վկայէ, թէ Վահան Թեքեան անհատականութիւնը ցարդ պատկառանք առթող երեւոյթ մըն է համայն հայ ժողովուրդին, որ մինչեւ օրս նոր սերունդին կը փոխանցէ ժամանակի կենդանի շունչը եւ կը մղէ ընթանալ դէպի պայծառ ապագայ առաւել հաստատուն քայլերով:

Պէյրութ

ԱՇԽԱՐՀԻ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵՄՆ

Պատմության սկիզբին իր ձեռքերում մեջ իշխանություն ունեցող ղեկավարությունը, իրեն ենթակա ժողովուրդին տուրքեր գանձելու և ժողովուրդին օգտակար ըլլալու սկզբունքը կ'ենթադրէ, որ իշխանությունը իսկապես ժողովուրդը կառավարող անկեղծ ու ճշմարիտ մարդիկ պետք է ըլլան բարի հովիւներու նման: Բայց եղած են այս երեւոյթը չարաշահող շատ իշխանատուներ, որոնք իրենց ենթակա ժողովուրդին հոգ չեն տարած, այլ զայն կեղեքած են պարտադրելով որ բարձր տուրքեր վճարէ: Այսպիսիները ժողովուրդին դէմ բրտութիւն գործադրած են, որոնք խաբէբայ կամ սուտ հովիւներ են: Պատմության մէջ անպարկեշտ հովիւները բացայայտօրէն կը յիշուին իբրև տիրապետչական ու վատ յատկութիւններով բռնատէրեր:

Մեր օրերուն յաճախ ականատես կ'ըլլանք բազմաթիւ խաբէբայ հովիւներու՝ քաղաքներու, իշխաններու կամ նախագահներու, որոնք իրենք զիրենք բարի ցոյց կու տան անսահման կեղծադրութեամբ ու խաբէութեամբ: Այսպիսի սուտ հովիւներու ենթակա մարդիկ լաւ կը ճանչնան զանոնք, սակայն անոնց տարածած սարսափին տակ չեն կրնար ճշմարտութիւնը յայտնել եւ անոնցմէ տկար անհատականութիւնները, իրենք ալ իրենց կարգին անսահման կեղծադրութեամբ դրականօրէն ու գովասանքով կ'արտայայտուին անոնց մասին:

Վերջին քանի մը տասնամեակներուն աշխարհակալ վերնախաւային իշխանութիւններ միջամուխ կ'ըլլան զանազան երկիրներու՝ պարտադրելով անոնց իրենց բաղաձայնները ճնշելու բարձր տուրքերով, կեղեքումներով եւ բռնութեամբ: Այս բոլորը կը կատարուին ականջին անոյշ հնչող սուտ լոգունգային բառերով՝ ինչպէս ազատութիւն, ժողովրդավարութիւն, հասարակութիւն ու բարգաւաճում: Մինչդէռ անոնք կը ձգտին ընկերութեան մէջ ստեղծել արդէն իսկ իրենց յառաջացուցած անհասարկ դասակարգերու միջեւ խոր անդունդներ:



Պիթբոյն Թուայնսգած Դրամի Խորհրդակիշերը

Աշխարհակալ իշխանութիւնները հաստատած են քանի մը միջազգային հիմնարկներ, ինչպէս «Միջազգային Արժոյթի Հիմնադրամ»ը (կրճատ՝ ՄԱՀ, IMF- International Monetary Fund) եւ «Համաշխարհային Դրամատուն»ը (World Bank), որպէս ժողովուրդներու ճնշման իրենց նշանակելի միջոցներ: Ասոնք զանազան երկիրներու կը տրամադրեն իբր բարգաւաճումի յատկացուելիք վարկեր՝ փաստացի պարտքի գումարներ, մէկ փոքր մասը իբրև նուէր, իսկ մեծ մասը իբրև փոխատուութիւն: Այս գործառնութեան անպայման կ'ընկերակցի կիսաբաբուն խրատ կամ խորհուրդ մը, իբր անուղակի եւ երբեմն ալ բացայայտ պարտադիր յանձնառութիւն՝ վարկ վերցուցած երկիրներուն իրենց ժողովուրդին վրայ բարձր տուրքեր հաստատելը: Անոնք նաեւ բարձրաձայն աղաղակի նմանող պահանջք-հրաման մըն ալ ունին վարկ վերցնող երկիրներուն, որպէսզի բարեկարգութիւն կատարեն իրենց երկրին մէջ: Հրամանները երկու տեսակ կ'ըլլան, քաբուն եւ բացայայտ: Դրական երեւոյթները բացայայտ, իսկ բացասականները՝ քաբուն կամ կիսաբաբուն: Ու այսպէս զանազան երկիրներ պարտադրաբար կը մտնեն մեծագումար պարտքերու տակ:

Երբ աշխարհակալ ղեկավարը երրորդ աշխարհի երկիրներէն մէկուն իր կամքը պարտադրելու դժուարութիւն կ'ունենայ, այն ատեն ան կը դիմէ այդ երկրին դրամանիշը արժեզրկելու: Այս արժեզրկումը սոսկ կամայական է ու կը կատարուի քուրթի վրայ գրիչի քեթի հպումով եւ որեւէ աղերս չունի երկրին տնտեսութեան ելեւէջներուն հետ: Իբրև արդիւնք՝ այդ երկրին քաղաքացիները մեծ վնասներու կ'ենթարկուին, իսկ աղքատները՝ անօթութեան: Լիբանանեան քրթոսկիի վաթսուն անգամ արժեզրկումը չորս տարիներու ընթացքին (2020-2023) օրինակ կը ծառայէ այս տնտեսական անարգ ոճիին:

Աշխարհի վրայ շատ մը երկիրներ արդէն սկսած են իրենց ժողովուրդին հաւաքել շատ բարձր տուրքեր, ինչպէս Հոլանտա՝ իր եկամտաւորի 49%, Շուէտ 50%, Պելճիքա 53,7%, Աւստրիա 55%, Դանիա 55,9%, Ճափոն 55,97%, Ֆինլանտա եւ Փոլսկրեայ Աժ 60%, որ աշխարհի բարձրագոյն տուրքն է (Համացանցային Կայքէջ.- <https://www.sevensesworldwide.com/need-help/countries-with-highest-taxes/>):

Շատ մը երկիրներու մէջ տուրքերէն հաւաքուած դրամը նախ եւ առաջ կը մտնէ ապականած ղեկավարներու գրպանները: Աշխարհակալ իշխանութիւնները (որոնք փաստացիօրէն նոյն կեղքոնէն կը ղեկավարուին՝ հիմնականօրէն ՄԱՀ-էն, յապարտան դիպուկ գուադիպութիւն իր հետապնդած նպատակին), աշխարհը գրաւելու ձգտումով երկրագունդի զանազան վայրերուն մէջ պատերազմներ կը հրահրեն: Անոնք կը ստեղծեն տնտեսական եւ այլ արհեստական հարցեր, որոնց լուծումը իրենք իսկ կ'առաջարկեն ու կը պարտադրեն որ ան գործադրուի ի նպատակ իրենց սեփական շահերուն: Այս ընթացքին հազարաւոր մարդիկ իրենց կեանքը կը կորսնցնեն ու անոնց բնակավայրերը քարոքանդ կ'ըլլան: Իրենց ձեռքին մէջ իշխանութիւն ունեցող ղեկավարներ մեծ գումարներ կը յատկացնեն զինանիւթերու ձեռքբերման եւ պատրաստութեան, հիմնական նպատակ ունենալով կարելի եղած չափով շատ մարդ սպաննել ու երկրագունդի մարդկութեան թիւը նուազեցնել:

Բացի զինաշինութենէն, աշխարհակալ իշխանութիւնը յառաջացած գիտութեան շնորհիւ մանրէներ եւ փոխանցիկ հիւանդութիւններու համաճարակներ կը տարածէ: Այսպիսով ահագին թիւով մարդոց կեանքերը խլելէ ետք, անոնք իբրև թէ փոխանցիկ հիւանդութիւններու զոհերը նուազեցնելու համար կասկածելի բաղադրութեամբ պատուաստներ հնարել կու տան ու ժողովուրդը կը ստիպեն որ ընդունին պատուաստուիլ, ինչպէս որ եղաւ Բո-

րոնայի ժամանակ, որուն իբր արդիւնք միլիոնաւոր մարդիկ մահացան: Երկրագունդի մարդկութեան թիւը սահմանափակելու այլ խորամանկ բայց ստոր հնարքով մը, վերին կոշտած իշխանատուները միասնականութիւնը կը քաջալերեն իբր բնական երեւոյթ մը եւ մարդկային ազատութեանց պատրուակով անոր օրինականութիւնը պարտադրելով սանձարձակ ազատութիւններ կու տան մանաւանդ երիտասարդներուն, այդպիսով զանոնք բարոյականօրէն փճացնելով եւ իրական ընտանիք կազմելէ հեռու պահելով:

Նոյն ժիրին մէջ այդ իշխանատուները տեղ տեղ արհեստական սովեր կը յառաջացնեն եւ իբր թէ մարդասիրական օգնութիւն ցոյց տալով (որ միշտ անբաւարար կ'ըլլայ սնունդի աղբիւրներու չզոյութեամբ եւ անհասանելիութեամբ), շատ մեծ թիւերով մարդիկ կը սպաննեն կեղծ սովամահութեամբ: Իսկ բնակելի քաղաքներու մօտակայ վայրերու մէջ ստորերկրային գաղտնի կորիզային եւ այլ անյայտ քանդիչ պայթումներու միջոցաւ արհեստական երկրաշարժներ կը յառաջացնեն (ինչպէս Հայաստանի հիւսիսը եղած 1988-ի երկրաշարժը), հազարաւորներու կեանքը խլելով: Վերջերս մեծ պետութիւններու կարգ մը իշխանատուներ բացայայտօրէն սպառնացին հիւլեական ռումբեր եւ քանդիչ զենքեր ալ գործածել իրենց կամքը պարտադրելու միտումով:

Աշխարհակալ այդ ոյժերը իրենց հակամարդկային քանդիչ բայց արտաքինով հմայիչ ծրագիրներուն գործադրութեան մէջ, վերջին տասնամեակներուն տարածեցին բջիջային հեռախօսները ու անոնց կապեցին մարդոց առօրեայ պէտքերու ծառայութիւնները գրեթէ ամէն ոլորտի մէջ: Ներկայիս եթէ անհատ մը բջիջային սեփական հեռախօս չկրէ բազմաթիւ կենցաղային ծառայութիւններէ կը զրկուի: Աւելին՝ իշխանատուները այս բջիջային հեռախօսներու միջոցով կը հետեւին իրաքանչիւր անհատի ու զայն իրենց հսկողութեան տակ կը պահեն՝ շնորհիւ յառաջացած ելեկտրոնային գիտերուն:

Այս գործընթացին մէջ աշխարհակալ ուժը կը ձգտի երկրագունդի վրայ միացնել ու միատեսակ դրամ ստիպել մարդկութեան, այն ալ թուայնացած՝ ինչպէս Պիթ բոյնը (Bit coin) եւ այլ նման նիւթական տեսակներ, որպէսզի այդպէսով մարդ արարածը անելի ենթակա ըլլայ մեծագումար բայց իրեն համար անտես ու ընդհանրապէս անհասանելի նիւթականին:

Վերջերս ալ այդ իշխանատու ուժերուն կամ ոչ փաստացի բայց իրականութեան մէջ միացնելու ուժին միջոցաւ երեսն եկաւ «Արհեստական բանականութիւն» (Artificial Intelligence) կոչուած իր Եութեամբ հակամարդկային հնարքը, մարդոց օգտակար ըլլալու պատրուակով անոնց ենթագիտակցիցին մէջ ինքնաբերաբար զարգացնելով այն միտքը, թէ ո՞վ դէմ է բանականութեան՝ ըլլայ ան բնական կամ արհեստական, բնականօրէն եզրակացնել տալով՝ ուրեմն եղածը օգտակար երեւոյթ մըն է: Սակայն ցարդ ան գործածուեցաւ հիմնականօրէն պատերազմի շարիքի մէջ եւ անոր ապագան մշուշոտ ու անյայտ է, մարդկութեան համար լաւ բաներ չխոստացող:



«Միջազգային Արժոյթի Հիմնադրամ»ի Կեդրոններէն Մէկը- Ուաշինկթըն Տի. Սի.

Տուրքերու ծիրին մէջ, քանի մը օրեր առաջ ԱՄՆ-ի նախագահ Տոնըլտ Թրամփի կամայական ու դիպուածային թուող արագ կարգադրութեամբ ներմուծող ապրանքներու վրայ մաքսային տուրքերը ահեղիօրէն բարձրացուց, ցնցելով համաշխարհային տնտեսական շուկաները սկսելով Գանատայէն եւ Երոպայէն մինչեւ Կեղոքոնական Ասիա ու Ճափոն: Այս քայլը խիստ ժխտական տպաւորութիւն ձգած է աշխարհի մէջ: Տնտեսագէտներու մեծ մասը զայն կը նկատէ իբրև աշխարհի ընդհանուր տնտեսութեան վնասակար քայլ, որուն դրդապատճառները բնաւ աղերս չունին տնտեսական առողջ հիմքերու հետ: Արդե՞օք այս քայլին ետին յետին նպատակ մը չկայ...

Դարեր առաջ, վերոյիշեալ վատ արարքներու վերաբերեալ ճշմարտութեան խօսքը Աստուծոյ կողմէ հասած է մարդու ականջներուն զանազան մարգարէներու բերնով, որոնցմէ է Եզեկիէլ, որուն գիրքին 34-րդ գլուխին մէջ կը կարդանք հետեւեալը.-

«Մարդու որդի», Իսրայէլի հովիւներուն դէմ գրուած. Տէրը կ'ըսէ հովիւներուն. «Վայ Իսրայէլի հովիւներուն, որոնք իրենք զիրենք կը կերակրեն: Հովիւները պէտք չ'որ հօտը կերակրեն»:

Հնադարեան Մերձաւոր Արեւելքի մէջ «հովիւ» բառը կ'ակնարկէ քաղաւորի կամ իշխանի: Օրինակի համար Դաւիթ քաղաւոր հովիւ մըն էր իրենայ ժողովուրդին համար, իսկ մարգարէները՝ հոգեւոր հովիւներ:

Եզեկիէլ Մարգարէի գիրքին վերոյիշեալ նոյն գլուխ 34-ին մէջ կը կարդանք նաեւ.-

«Վայ ձեզի ով սուտ հովիւներ, որ դուք պարարտ ոչխարները կը մորթէք եւ կ'ուտէք ու անոնց բուրդով հագուստներ կը հագուիք, սակայն հօտը չէք կերակրեր, տկարը չէք զօրացնէր, ոչ ալ հիւանդը կը բուժէք, նաեւ կոտորածքը չէք կապեր եւ կորսուածը ետ չէք բերեր: Սակայն ոյժով եւ բռնութեամբ զանոնք կը կառավարէք»:

Վերոյիշեալ հակամարդկային միջոցառումները ցոյց կու տան, թէ աշխարհակալներ նպատակադրած են երկրագունդն ու անոր բնակչութիւնը ենթարկել մէկ իշխանութեան, որ վերոնշեալ տուեալներով միայն սատանայական է եւ Աստուծոյ հակառակ, հետեւաբար ի վերջոյ կործանման դատապարտուած:

Պէլլոմբ

ՄԱՍԻԿՈՆԵԻՑ ՏՈՒՄԷՆ ԾԱՆՕՌ-ԱՆԾԱՆՕՌ ՊԱՏՄԻՉ ՄՐ՝

ՅՈՎՀԱՆ ԵՊՍ. ՄԱՍԻԿՈՆԵԱՆ (Է. ԴԱՐ)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Երբ կը տրուի «Մամիկոնեան» մականունը, 7-77 տարեկան իւրաքանչիւր հայու մտքին մէջ կ'ուրուագծուի անպայման Աւարայրի ճակատամարտի հերոս **Վարդան Մամիկոնեանը**: Այնուհետեւ, եթէ քիչ-շատ սերտեր էք հայոց հին պատմութիւնը, պիտի յաջողիք թուել նոյն մականունը կրող ու զինուորական ասպարէզի մէջ հռչակ շահած ուրիշ երեւելիներ ալ, ինչպէս՝ Վաչէ Մամիկոնեանը, Արտաւազ Մամիկոնեանը, Վահան Մամիկոնեանը, Վարդ Մամիկոնեանը, Վասակ Մամիկոնեանը, Մուշեղ Մամիկոնեանը, իշխան Գրիգոր Մամիկոնեանը եւ ուրիշներ: Բոլորն ալ յայտնի՝ իրենց հայրենասիրական նկարագրով, անաղարտ ազգասիրութեամբ, ռազմական քաջագործութիւններով եւ պետական պաշտօններու թելադրած խոհականութեամբ:



Մամիկոնեանները, առհասարակ, հանդիսացեր են **զենքի ասպետներ**: Հայոց արքունիքը անոնց վստահեր է հայկական բանակի սպարապետութիւնը, ու Մամիկոնեանը գրեթէ միշտ ալ պատուով ու կարգապահութեամբ կատարեր են իրենց պատասխանատու պաշտօնը:

Չենքի ասպետներու կողքին բացառութիւն մըն է սակայն **Յովհան Եպս. Մամիկոնեան**, Է. դարուն ապրած հայ պատմիչ մը, որ թուրի կամ նիզակի փոխարէն նախընտրել է իր ափին մէջ ունենալ գրիչ մը ու շարադրել իր ժամանակաշրջանի իրադարձութիւններն որոշ դրուագներ...:

Անցեալները, երբ ձեռք զարկի գրագրանիս սանդղամատերուն վրայ քով-քովի շարուած **«Մատենագիրք հայոց»** կոթողաւին շարքին (տպում՝ Անթիլիաս, 2003-էն սկսեալ, աւելի քան մէկուկէս տասնեակ հաստափոր հատորներով, Ե.-ԺԲ. դարերու հայ հին գրականութեան ամբողջութիւնը՝ գրաբար բնագրով), հոն, Ե. հատորին մէջ, հանդիպեցայ Յովհան Եպս. Մամիկոնեանի անունին, իրեն վերագրուող **«Պատմութիւն Տարօնոյ»** երկին գուգահեռ:

«Մատենագիրք հայոց»-ը ակադեմական աննախընթաց հրատարակութիւն է, որուն ծրագրատրուածին ու մշակման մեծագոյն դերակատարը եղած էր Երեւանի Մաշտոցեան Մատենադարանը՝ գործի լծելով իր ձեռագրագետներն ու բանասերները: Աշխատանքին նիւթական բեռն ալ ստանձներ էր Գալուստ Կիւլաբեկեան Հիմնարկութեան հայկական բաժանմունքը՝ դոկտ. Չաւեն Եկանեանի գլխաւորութեամբ: Այս ծանրածանր հատորներուն մէջ կը գտնենք Փաստոս Բիւզանդոսի ու Կորիւնը, Եգնիկ Կողբացիին ու Խորենացիին, Ագաթանգեղոսն ու Գաբար Փարպեցիին, Դափք Անյաղթն ու Վրթանէս Քերթոզը, Մաքսիմոսն ու Մեթոքը, Անանիա Շիրակացիին ու Թէոդորոս Քոթեմարցիին, Օճնեցիի ու Չարաբիս Զագեցիի հայրապետերը, Դրասխանակերտացիին ու Գր. Նարեկացիին, Ստեփանոս Ասողիկ Տարօնեցիին, Գրիգոր Մագիստրոսն ու Արիստակէս Լաստիվերտացիին, Մխիթար Գօշը եւ այլն, եւ այլն: Անունն է՝ ր, անունն է՝ ր, ոմանը՝ քաջածանօթ, ոմանը՝ նուազ ծանօթ, ուրիշներ՝ բոլորովին անծանօթ...:



«Պատմութիւն Տարօնոյ» երկին Ա. տպագրութեան աննախընթացը:

Է՛հ, կան անուններ, որոնք մշտապէս «կը քնանան» գիրքերու մէջ...: Հարկ է երբեմն «արթնցնել» զանոնք ու դէմ-յանդիման բերել նոր օրերու ընթերցողներուն...: Այսօր, ահաաաիկ, քանի մը խօսք Յովհան Եպս. Մամիկոնեանի մասին:

Հայ թէ օտար բանասերներու եւ գրականագետներու կողմէ բազմաթիւ ուսումնասիրութիւններու արժանացած միջնադարեան գրիչ մըն է Յովհան Եպս. Մամիկոնեան, որուն անունը կապուած է Տարօնի աշխարհին (հասկնալ՝ Մուշը, Մասունն ու Պիթիխը՝ իրենց շրջակայքով) ու անոր գլխատր սրբատեղիին՝ **Իննակնեան** կամ **Գլակայ Ս. Կարապետի վանքին**:

Իր մասին կենսագրական տուեալներ չկան: Կ'ենթադրուի սակայն, որ ան ապրած է 7-րդ դարու երկրորդ կէսին եւ վարած՝ Ս. Կարապետի վանահայրութիւնը (35-րդ վանահայրը), իբրեւ Մամիկոնեան Տան եպիսկոպոս եւ Տարօնի հոգեւոր առաջնորդ:

Յովհան Եպիսկոպոսի անունով մեզի հասած է շատ հետաքրքրական երկ մը, որ կը կոչուի **«Պատմութիւն Տարօնոյ»**: Այս գործին առաջին բաժինը կը վերագրուի Չենոբ Գլակ ասորի վանականին, որ եղած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի անմիջական գործակիցներէն մին ու Ս. Կարապետի առաջին վանահայրը (Դ. դար): Չենոբ Գլակ կը պատմէ Դ. դարուն քրիստոնեութեան տարածման աշխատանքը Տարօնի աշխարհին մէջ: Ի՞նչ պատերազմներ մղուեցան քուրմերու դէմ, ինչպէ՞ս պարտուեցան **Դեմետր** ու **Գիսանէ** չաստուածներու մեհենանը պաշտպանող հեթանոսները ու այդ նոյն մեհենանին տեղը յետոյ կառուցուեցաւ Ս. Կարապետը, որո՞նք էին քրիստոնէայ առաջին ռահվիրաները եւ այլն: Կ'ենթադրուի, որ Չենոբ Գլակ այս շարադրանքին ձեռնամուխ եղած է Գրիգոր Լուսաւորիչի թելադրութեամբ: Անշուշտ, շարադրանքին բնագիրը ասորերէն կամ յունարէն եղած է, որովհետեւ այդ շրջանին դեռ չէր ստեղծուած հայոց այբուբանը: Ուրեմն, գործը հետագային թարգմանուած է հայերէնի, հաւանաբար Յովհան Եպս. Մամիկոնեանի կողմէ:

Ինչ կը վերաբերի գիրքին Բ. բաժնին,-- որուն հեղինակ ցոյց կը տրուի Յովհան Եպիսկոպոսը,-- ապա այստեղ տեղական գրաբարխառն գաւառական խօսուածքով կը պատմուի Չ.-Է. դարերուն Տարօնի շրջանի անցքերուն մասին,

ԼԵՒՈՆ ԾԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

571-72-ի հակապարսկական ապստամբութեան, աւելի ուշ՝ արաբական առաջին արշաւանքներուն, ինչպէս նաեւ Ս. Կարապետի վանքին առնչուած ինչ-ինչ դէպքերու մասին: Իբրեւ հերոսներ՝ մեր դիմաց կը ցցուին Մամիկոնեան քաջակորով շարք մը իշխաններ՝ **Մուշեղ Մամիկոնեանը**, անոր որդեգիր **Գայլ Վահանը**, ասոր որդին՝ **Սմբատը**, այս վերջնոյն գաւակը՝ **Վահան Կամսարականը** եւ վերջապէս անոր յաջորդը՝ **Տիրացը**, պարսիկ Մասանեան թշնամիներու դէմ իրենց դիւցազնական մարտերով: Հինգ սերունդի անպարտելի հսկաներու պատմութիւն մը, ուրեմն, որ վեր կ'առնուի անոնց քաջութիւնը, իմաստութիւնն ու խորամանկութիւնը: Մարտնչումները նկարագրուած են այնպիսի հրաշապատում եւ հեքիաթային չափազանցութիւններով, որ անոնք մեր օրերուն եւս ներշնչումի առիթ եղած են գրականութեան համար: Չորօրինակ, պատանհներու ուղղեալ ընթերցանութեան գիրք մըն է Սոնա Չէրթեանի **«Մուշեղ Մամիկոնեան եւ Գայլ Վահան»** պատումը (Անթիլիաս, 1989), մինչ հայրենի գրող եւ զննապետ Էդուարդ Խաչիկեանի **«Հայոց Գայլը»**-ն (Երեւան, 2020) դասական տիպի պատմավէպ մըն է: Երկուքին ալ նիւրբ քաղուած է Յովհան Եպիսկոպոսի գիրքէն:

Բանասերները որքան ալ վիճած ըլլան իրարու հետ՝ ճշդերու համար այս երկին թո՛ւն հեղինակին ինքնութիւնը կամ որքան ալ տարակարծիք եղած ըլլան երկին գրառումի դարաշրջանին մասին (7-րդ, 8-րդ, թէ՛ 9-րդ դար), ինչպէս նաեւ գործին պատմագաղափարական կամ գրական-գեղարուեստական արժէքին շուրջ, անոնց ընդհանուր համոզումն այն է սակայն՝ որ ամբողջ գիրքը խմբագրուած ու կազմուած է Յովհան Եպիսկոպոսի կողմէ: Յովհան, օգտագործելով Տարօն գաւառի մէջ հաւաքուած գրատր ու բանասիր բազմազան նիւթերը՝ յաջողած է ժողովածու մը կազմել անոնցմով՝ շարադրելով երկրամասի մը պատմութիւնը:

«Պատմութիւն Տարօնոյ»-ի մէջ կը տրուի նաեւ Գլակայ վանքին վանահայրերու անուանացանկն ու ուխտատեղիին քանի մը դարերու առասպելատիպ պատմութիւնը, ընդհանրապէս՝ բանահիսաակական ծագում ունեցող ժողովրդային աւանդապատում գրոյցներու ձեւին տակ:

Շատ հետաքրքրական է գիրքին վերջաբանի «Յիշատակարան»-ն ալ, որ պարզաբանումներ կը բերէ գործին ինչ-ինչ երեսներուն մասին: Չորօրինակ, այստեղ, Յովհան Եպս. կ'ըսէ թէ իր գործը շարադրած է Ներսէս Գ. Շինող կաթողիկոսին (641-661) հրամանով:

Պատմաբան Լէո լայնօրէն անդրադարձած է այս գործին ու կը նախընտրէ գայն կոչել «Տարօնի վէպ»: Ան կ'ըսէ որ Է. դարուն **Մեթոք**ն զատ ուրիշ պատմիչ չենք ունեցած եւ ուստի՝ մատենագրութեան մէջ առկայ է պատմական տեղեկութիւններու որոշ պակաս: Յովհան Եպս. Մամիկոնեանի երկը թէն կու գայ նոյն դարէն, սակայն անիկա վատրական պատմութիւն չէ, այլ սոսկ «ժողովրդական վէպ» մը: Այնուհանդերձ, այնտեղ քաքնուած են «պատմական դէպքերի յաճախ խուլ, բայց յաճախ եւ շատ պարզ արձագանգներ»:

Լէո նկատել կու տայ որ այս վէպին կեդրոնը Մամիկոնեացի երկիր,-- Տարօն,-- հանրահռչակ սրբավայրն է՝ Ս. Կարապետի վանքը, որ փառաբանուած է արտակարգ լուսապսակներով: «**Ամբողջ վէպը, սկզբից մինչեւ վերջ, Ս. Կարապետի պաշտամունքին է ծառայում: Եթէ Տարօն կայ, եթէ նրա մէջ հսկայ իշխաններ են ապրում, եթէ յաղթում է Տարօնը եւ երջանիկ է ու կուշտ,-- այս բոլորը միայն այն պատճառով, որ Ս. Կարապետ կայ այնտեղ, որ տալիս է այն ամենը, ինչ խնդրում է տարօնցին: Այդքան զարգացած մի տեղային պաշտամունք հազիւ թէ կարելի լինէր գտնել Հայաստանի մի ուրիշ կողմում: Եւ տարօնցիութիւնը, իբրեւ ազգային-կուլտուրական ուրոյն արժէք անկարելի է հասկանալ առանց Ս. Կարապետի: Նա՛ է, որ ամէն անգամ, երբ տարօնցին նրան կանչում է, փայլուն զգեստներով, լուսեղէն ճաճանչներով պատերազմի դաշտ է իջնում եւ թշնամուն խորտակում: Նա նոյնիսկ Քրիստոսին էլ է երկնքից իջեցնում, որ իբրեւ թագաւորների թագաւոր, թագով պսակուած, գալիս է եւ տարօնցիների համար յաղթութիւններ վաստակում»** («Երկերի ժողովածու», Բ. հատոր, Երեւան, 1967, էջ 256):



Մշոյ Ս. Կարապետի վանքը

հրատարակութեան նախապատիւը կ'երթայ սակայն փրոֆ. Աշոտ Աբրահամեանին (Երեւան, 1941): Աւելի ուշ, Պէյրութի մէջ Կարօ Մասունի գայն արեւմտահայերէն աշխարհաբարի վերածելով խմբագրած ու հրատարակած է **«Տարօնի պատմագրութիւն»** խորագրով (1949): Իսկ գործին արեւելահայերէն ամբողջական թարգմանութիւնը, ընդարձակ վերլուծականով ու սպառիչ ծանօթագրութիւններով, յաջողուցած է հայրենի բանասէր Վարդան Վարդանեան (Երեւան, 1989): Կայ անշուշտ, ինչպէս նշեցինք, Անթիլիասի **«Մատենագիրք հայոց»**-ին մէջ ընդգրկուած նորամշակ տպագրութիւնն ալ, Ալեքսան Զակարեանի նախաբանով (2005):

Երկը ունեցած է նաեւ երկու անգլերէն (թրգմ.) Ռուբեն Պետրոսեանի, Նիլ Եռոք, 1985 եւ ապա՝ Լեւոն Աւուոյեանի, Աթլանթա, 1993) ու Ֆրանսերէն թարգմանութիւններ:

Հակէպ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՇՔԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԶԱՐԵՆ Գ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Այս օրերու մահուան եւ անմահութեան խոկումներու մէջ խորասուզուած խորհրդածութիւններ են, որոնք մարդս կը մղէ մտածելու խափուսիկ կեանքին եւ յաւերժութեան կեանքին մասին:

Բնական իրողութիւն մըն է, որ առանց բացառութեան ամէն մարդ յաճախ կը մտածէ կեանքի իմաստին եւ կը փորձէ եզրակացնել՝ թէ արդէօք ունայնութիւնն է, թէ ոչ սրբազան նպատակ մը կը հետապնդէ ապրիլը եւ կեանքը:

Մենք կը հաւատանք, որ կեանքը ունայնութիւն մը չէ, այլ խորհրդաւոր գաղտնիք մը ունի եւ մենք որպէս պարզ մահկանացուներ կ'արժեւորենք այս կեանքը աշխատանքով՝ ստեղծագործութիւններով, ազգը սիրելով եւ սէր նուիրելով ուրիշին: Ապրելու այս տեղանքը՝ նոյնինքն սրբազան նպատակ մըն է, այլ բնագոյնային բնական գոհացում մը, իսկ եթէ այդ ապրելու տեղանքին միանայ խոնարհութիւնը, վսեմ գաղափար մը, տեսիլք մը, մարդասիրական, բարեսիրական, ազգասիրական կամ կրօնական այս պարագային «Յիսուսի յարութեան» գաղափարը, եւ կամ հոգեւոր իմացական ստեղծագործութիւն մը, այսինքն մարդուն մէջ միանան երկու էակները, խորհողը ու զգացողը, այն ժամանակ կեանքը իմաստաւորուած կ'ըլլայ գերագոյն գոհունակութեամբ, ուրախութեամբ, եւ դէպի անմահութեան տանող ճամբան հարթուած կ'ըլլայ:

Այս օրերուն աշխարհի ամէն անկիւն պատերազմի ռումբ կը պայթի, կամ տնտեսական պայքար կը տարուի, որուն վերջը պատերազմն է: Ուստի կը դիմենք խաղաղութեան զինուորներուն, հզօր պետութեանց առաջնորդներուն, ղեկավարներուն եւ հաւատացեալներուն, մէկական մտմ վառենք եւ խաղաղութեան ճամբան հարթենք, խաղաղութեան լույսն ու յոյսը վառելով ամէն մէկ հաւատացեալին հոգիին եւ մտքին մէջ: «Խաղաղութիւն հաստատել», այս է ժողովուրդներու ըզմանքը, եւ Աստուծոյ ըզմանքը, «Ռդիկ Աստուծոյ» իր լեռան քարոզին մէջ, երանիներու շարքին կ'ըստ.

«Երանի խաղաղարարներուն, զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին»:

Պէտք է դադրին հզօր պետութիւնները, զէնք, ռումբ, հրթիռ ստեղծել, պէտք է դադրին այն ընկերութիւնները, որոնք կը ստեղծեն քանդիչ ռմբակոծող սառնակներ:

Անեղի ապահով սառնակներ պէտք է ստեղծեն՝ հասարակութիւնը, ժողովուրդները փոխադրելու համար:

Բոլոր հզօր երկիրներու առաջնորդները «Խաղաղութեան պէտք է հաւատան» ըլլան իսլամ կամ քրիստոնէայ, որովհետեւ անոնք *«Յատրժական կեանքի»* կը հաւատան: Բոլոր կրօններու առաջնորդներն ու անհաւատները, անգամ մի մը համար խորհին, թէ այս կեանքը նպատակ մը ունի, որ մենք կը կոչենք Յարութեան հրաշքը, որ ինքնին յաւերժական կեանքն է:

Արեւմտ

ՃՇԴՈՒՄ

Յարգելի հայ մանուկ, մինչ ես կը յորդորէի հաւաքել եւ գրառել մեզ շրջապատող մտաւորականների կամ մշակոյթի մարդկանց յիշողութիւնները, ունեցայ ապատեղեկատուութիւն: Գրառմանս մէջ յայտնուել էր անճշտութիւն, որն ինձ յուշեց Եգիպտոսում ապրող ընկերուիս՝ գրող Մարուշ Երամեանը.

«Միքելի Կարինէ, կարդացի վերջին «Պայքար»-ին մէջ գրութիւնը Մասիս Արարատեանի մասին, որ կ'ըսես նաեւ, թէ Արմէն Թօփճեանը մօրս քեռին էր: Մայրս՝ Արուսեակը, Թօփճեան էր, եւ Արմէն Թօփճեանը իր ամէնէն փոքր հօրեղբայրն էր: Կ'ուզէի շտկուել, եթէ կարելիութիւն կայ, պարզապէս որպէսզի սխալ տեղեկութիւն չհաստատուի մանուկին մէջ»:

Շնորհակալութիւն, Մարուշ, կ'ողորմեմ այս զգուշացումը սոյն յօդուածը տպագրած թերթերին:

Կարինէ Տէր Գեորգեան

ՅՈՒԿԻ ԷՕՐՏԵՔԵԱՆԻ «Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ 1991-2021 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ-ԱԿՆԱՐԿ» ԳԻՐՔԻՆ ԵՆՈՐՀԱՆԴԵՍ-ԳԻՆԵՁՈՆԸ

Երեւանի Հ.Բ.Ը.Մ.-ի հանդիսարահին մէջ, Երեքշաբթի, 15 Ապրիլ 2025-ին, մեծ թիւով հանդիսականներու ներկայութեամբ, տեղի ունեցած է Միութեան Հայաստանի գրասենեակի նախկին փոխ-տնօրէն Յովիկ Էօրտեքեանի «Հ.Բ.Ը. Միութեան Հայրենական գործունէութիւնը 1991-2021 տարիներուն-ակնարկ» գիրքին շնորհանդէս-գինեձօնը, որ կազմակերպուած է Միութեան 119-ամեակին առիթով:



Ձեռնարկը սկիզբ առած է Հայաստանի եւ Հ.Բ.Ը. Միութեան քայլերգներով: Բացման խօսքը կատարած է Միութեան Երեւանի գրասենեակի գործադիր-տնօրէնուհի Մարինա Մխիթարեանը, որմէ ետք գիրքը ներկայացնելու համար խօսքը տրուած է Միութեան նախագահի օգնական պարոն Արթուր Համալեանին, որ առջանց դրութեամբ հանգամանալից ներկայացուցած է գիրքին բովանդակութիւնը, կառուցուածքը եւ արժէքը: Համալեան ըսած է. «...Յովիկ Էօրտեքեան, իբրեւ երկար տարիներու միութենական ազգանուէր գործունէութիւն ունեցած անձ, խմբագիր, լրագրող եւ ժրագան ուսումնասիրող, արժանի է զնահատանքի եւ երախտագիտութեան»: Ան արելցուցած է. «...Կարեւոր է հաստատել, որ վերջին 30 տարիներու Միութեան հայրենի գործունէութեան ժամանակագրական արձանագրումի կարեւոր հանգամանքէն անդին, անհիկա կը յատկանշուի պատմական դէպքերու գուցահեռներով, որոնք հեղինակը շարունակաբար կը նշէ իր արձանագրումներու ընթացքին: Համալեան շարունակած է «...Դիւրին ընթեռնելի, արագ թերթատելի եւ համապատկերային իր բնոյթով, հատորը առձեռն ուղեցոյց մը եւ սկզբնադրիւր մը կրնայ ըլլալ պատմութիւնը ուսումնասիրողներու համար, միաժամանակ նոյնքան եւ հաճելի ու օգտակար աղբիւր մը անոնց համար, որոնք կ'ուզեն ընթեռնել Միութեան այլապէս լայնածիր գործունէութիւնը»:



Երկրորդ բանախօսը եղած է Միութեան Հայկական համացանցային համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի տիկին Զեփիւն Թամերեանը, որ նոյնպէս խօսած է հատորին պատմագիտական արժէքին մասին: Ան ըսած է. «...Փաստերու եւ վկայութիւններու վրայ իմնուած այս պատմագրական-վերլուծական աշխատասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ 1991-էն մինչեւ 2021 Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հայրենանուէր ծառայութիւնը՝ Հայաստանի եւ Արցախի մէջ: Գիրքը ընթերցելով մանրամասն տեղեկութիւն կը ստանանք Միութեան իրագործած այն ծրագիրներուն մասին, որոնք նպատած են Հայաստանի ծաղկման եւ Միջուր-Հայրենիք կապի խորացման»: Թամերեան եզրակացուցած է. «...Բակ ինձի կը մնայ ըսել, որ այս պատմագրական աշխատութեան մէջ Յովիկ Էօրտեքեան կրցած է ստանձնել մատենագիրի դերը, թողոքի յանձնելով փաստացի իրողութիւններ՝ անաչառ մօտեցումով, պարզ գեղեցիկ ոճով եւ... անթերի արեւմտահայերէնով»:



Ելոյթ ունեցած է նաեւ հեղինակ Էօրտեքեան, որ ի միջի այլոց, ըսած է. «...Մեր այս գործը պատմագիտական աշխատութիւն մը մատուցելու, կամ վերջին երեսուն տարիներու ամբողջական պատմութիւնը ներկայացնելու յաւակնութիւն չունի, այլ պարզապէս փորձ մըն է ի մի բերելու, վատերագրելու եւ թողոքի յանձնելու այդ տարիներու կարեւոր իրադարձութիւնները, իրագործումները, հայրենահայրութեան եւ Հայաստանի զօրացումին նպաստող նախաձեռնութիւնները եւ ճգնաժամներու դիմագրաւումի ծրագիրները»: Էօրտեքեան շարունակած է. «...Օգտուելով արխիւային նիւթերէն, մանուկն եւ Միութեան հրատարակութիւններէն, փորձած ենք առանձնացնել մեր կարծիքով ամէնէն կարեւոր իրադարձութիւնները, իրագործումները, կենսական ծրագիրները եւ գործող անձերը: Յատկապէս կարեւորած ենք հայրենի հայութեան կենսագործունէութեան վրայ դրական ազդեցութիւն գործած Միութեան թէ անոր անհատ բարերարներուն նուիրատուութիւններուն շնորհիւ կեանքի կոչուած ծրագիրները, անդրադարձած ենք նաեւ որոշ չիրագործուած ծրագիրներու եւ վրիպումներու: Ըստ ուղղութիւններու, ցանկագրած ենք այդ ծրագիրները, նախաձեռնութիւնները, գործընկերութիւնները եւ հրատարակութիւնները»:

Գործարարուած գեղարուեստական յայտագիրին ընթացքին ելոյթներ ունեցած են երկու երիտասարդ տաղանդաւոր դաշնակահարներ, որոնք իրենց բացառիկ կատարումով հնայած են ներկայները:

Շնորհանդէսին առիթով, առ ի գնահատանք բազմամեայ նուիրեալ գործունէութեան, Յովիկ Էօրտեքեան պարգևատրուած է յատուկ յուշանուէրով մը՝ ձեռամբ Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի նախագահ Վազգէն Տազուպեանի: Գիրքին գինեձօնը միասնաբար կատարած են հեղինակը, Վազգէն Տազուպեանը եւ


Tekeyan Cultural Association
Boston Chapter
presents

The Global World of Armenian Merchants, 1600-1720

Lecture by Dr. Gayane Ayvazyan
Ph.D. from NAS, Armenia; Joint Ph.D. Candidate at Harvard University's History Department and Center of Middle Eastern Studies

Lecture is primarily in the Armenian language

Thurs., May 1, 7 p.m.
Baikar Building
755 Mt. Auburn Street, Watertown
(use Norseman Ave. door)
Free admission, reception
For more info contact
syogurtian@comcast.net
617 281-1647



ԱՅԺՄԵԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՁԵՌՆԱՐԿ ԵՐԵՒԱՆԻ ԹՄՄ-ԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

Ստորև ներկայացրած ձեռնարկը բացի իր պատմական տեղեկատուական կարևոր բնույթից, այս օրերում կը ներկայացնէ նաև դիւանագիտական և ռազմավարական խիստ կարևոր բնույթ ունեցող վերջերս Ատրայեճանի կողմէ կատարուող պատմութիւնը խեղաթիւրելու հսկայական աշխատանքը և տրամադրուած գումարները, համոզելու համար միջազգային հանրութիւնը, թէ Հայաստան գոյութիւն չունի, քանի որ հայեր ատրայեճանական ծագում ունին...

Խմբ.

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՏԼԱՍԸ»

Հայաստանի ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ և բարերար Ռուբեն Գրիգորեանի մեկենասութեամբ վերահրատարակուած է «Հայաստանի պատմական քարտեզագրութեան ատլաս» մեծածաւալ ժողովածուն: Այն կազմուած է 300-էն աւելի քարտեզներէ, հեղինակը ֆրանսահայ քարտեզագետ, աշխարհագրագետ, Ֆրանսայի «Պատուոյ լեգէոնի» շքանշանակիր Չատիկ Խանգաղեանն է: Բնօրինակը պահուած է Վենետիկի Միսիթարեան միաբաններու մօտ և առաջին անգամ հրատարակուած 1960 թուականին:




Օրերս ԹԵՔԵԱՆ կեդրոնին մէջ կայացաւ բացառիկ աշխատութեան շնորհահանդէսը, որուն ընթացքին եգալի աշխատութիւն նուիրաբերուեցաւ Հայաստանի բուհական գրադարաններուն, հայագիտական կեդրոններուն, գիտակրթական հաստատութիւններուն, դեսպանատուներուն, կը տրուին նաև արտերկրի հաստատութիւններուն:



«Ատլաս»-ի բնագիրը ֆրանսերէնով է և բաղկացած է բացատրական նիւթերով, քարտեզներով և նկարներով: 85 տարի ետք երկրորդ կէտնք ստացած ժողովածուն վերահրատարակուած է ռուսերէն, անգլերէն և ֆրանսերէն, որ աւելի կ'ընդարձակէ պատմական վկայութիւններն ու ճշմարտութիւնները հանրայնացնելու և տարածելու հնարաւորութիւնը: Օտար լեզուներով հրատարակուած քարտեզները վառ ապացոյցն են, որ հազարամեակներ առաջ Հայաստանը եղած է, հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհին մէջ բնիկ է և կարեւորագոյն դերակատարութիւն ունեցած է տարածաշրջանին մէջ, որտեղ այսօրուան ինքնահռչակ պետութիւններու նշոյլն անգամ չէ եղած:



Բարերար Ռուբեն Գրիգորեանը վստահ է՝ քարտեզներու ժողովածուն պատմական իրողութիւններու կարեւոր վկայութիւն է և անոր վերահրատարակումը այսօր առաւել քան կարեւոր է՝ ցոյց տալու, որ հազարաւոր տարիներ հայ ժողովուրդը ունեցած է տարածքներ, հայրենիք: Ատլասի խորհրդանշական առաջին օրինակը ան նուիրեց Միսիթարեան Միաբանութեան միաբան Համազասպ Քելչիշեանին:



Քարտեզագրական աշխատանքները իրականացուցած է պատմական գիտութիւններու դոկտոր Վարդան Միսիթարեանը, ուր կարեւորեց ատլասի վերահրատարակումը յատկապէս մեր օրերուն, որովհետեւ ատոնք կ'ընդգրկեն մարդկութեան զարգացման բոլոր փուլերը՝ Անտիկ շրջանէն մինչև 20-րդ դարու կէսերը. այդ բոլոր քարտեզներուն

մէջ յիշատակուած է Հայաստանը: Նշենք, որ «Ատլաս»-ի վերատպումը հսկայական նշանակութիւն ունի անցեալի մասին գիտելիքները պահպանելու գործին մէջ: Բացի այդ, այն գործուն քայլ է պատմական կեդարարութիւններուն դիմակայելու գործին մէջ. Հայաստանի դարաւոր գոյութիւնը ժխտող, պատմութիւնը խեղաթիւրող, պատմական քարտեզներն ու վկայութիւնները աղաւաղող օտարագիւնները կրնան Չատիկ Խանգաղեանի այս աշխատութեան շնորհիւ առերեսուիլ պատմական ճշմարտութեան հետ:

Հ. ՎԱԿԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ (1894 - 1977) ԲԵՐԷՔ ԻՆՁ ԶԱՅՆ ԲՈԼՈՐ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒՄՆ

Փողոցին մէջ եթէ երբեք հանդիպիք
Լակոտ մը մերկ, սեւ ու խոշոր աչքերով,
Որ կը շրջի սուլելով «Սեր Հայրենիք»՝
Բերէ՛ք ինձ զայն, բերէ՛ք իմ գիրկը՝ սիրով:

Պիտի պագնեն անոր ճակատը մրտ,
Դրոշմելով այնտեղ՝ հոգի մ'ապստամբ.
Պիտի վառեն աչքերուն մէջն առաւօտ,
Հայաստանի արեգակին պերճութեամբ:

Արշալոյսի երկունքն ունի ահաւոր՝
Իր ամպոտած յօնքերուն տակը խռով.
Բերէ՛ք որ ես սրբեն աչքերն իր աղոտը՝
Այնտեղ գծեն նոր Հայաստան մը փառքով:

Կուրծքը պատեն սեւ ժայռերէն Վան – Տոսալի,
Ահագնութեան Տիգրաններու տամ հանճար,
Եւ Վարդանի մութ կարմրութիւնը սրտի՝
Որ բարձրանայ, հսկայանայ՝ անդադար:

Չուլէ՛մ անոր երկու երկաթ բազուկներ,
Միրտ մը՝ պողպատ, արեւ աչքեր հրավառ.
Որպէս հոգի շնչեն խորխոր բո՛ւրջ մեր՝
Թիկունք տալով կողը Մասեաց վեհափառ:

Անոր վառվառն հոգիին մէջ ստահակ,
Որբութեան հետ կ'ապրի ազնիւ ցեղ մը հին.
Անոր ծծած կաթն արի՛ւն է դառնորակ,
Ու մա՛յր չունի, - Թուրքէ՛րը զայն կոտորեցին:

Չայն փողոցները նետեցին ցնցոտիկ,
Փափուկ ձեռքին ցուպ մը տալով պանդուխտի.
Գնա՛, քսի՛ն, դուն հոս չունի՛ս հայրենիք
Եւ ոչ ալ հայր մը՝ որ քաջերուն հետ հանգչի:

Արտասուելով դուն, որդեալ կ'իմ, գնացիք
Մինչեւ Տեր-Չօր, մինչեւ Նիւ-Եորք եւ մինչեւ ...
Ճամբաներդ հայ արիւնով ներկեցիր,
Գտնելու քեզ պատառ մը հաց, քիչ մ'արեւ:

Ո՞վ արտասուեց քեզ հետ ընկեր առ ընկեր.
Ո՞վ սրբեց քու ցօղն աչքերուդ յորդառատ.
Համբուրեցին ու մատնեցին քու պարզ սեր.
Հպարտ հոգիդ լոկ քեզ մնաց: - Բա՛ւ է այդ:

Բա՛ւ է քեզ այդ՝ երբ երակիդ մէջն ունիս
Վահագներու աստուածային արիւնէն.
Երբ զաւակն ես, երիտասարդ իմ ցեղիս՝
Որ չի մատներ ո՛չ քաջութիւն և ո՛չ քէն:

Թո՛ղ, լայն ճակատդ այժմ համբուրեն սրտաբաց,
Եւ Հայութեանդ երկրպագեն հաւատքով,
Ո՞վ հայրենի գեղեցկութիւն տանջուած,
Ու մերձեցան սպիներուդ՝ յարգանքով:

Եկո՛ւր որ քեզ տրվեցնեն՝ պապերուս
Քաջի խօսքերն ու մարտական քայլերգներ.
Բանա՛մ քեզի Խորենացին խռովալոյզ
Եւ հոգուդ մէջ դնեն վրէժի մրրիկներ,

Որ չըջի՛ս թափառական՝ դռնէ դուռ,
Որ չմուրա՛ս թուրք մը անարգ անցագրի,
Ազատ մեծնաս, հպարտ մեծնաս, կաշմբուռն՝
Ըլլաս զաւակն հայրենիքիդ արժանի:

Ես կը սիրեն քու խենդ արիւնդ հայկական,
Բոցն աչքերուդ՝ որ մինչ երկինք կ'երկնայ,
Այնտեղ խաչի եւ հաւատքի լոյսեր կան,
Այնտեղ կայ մեր վրէժանիդ ապագան:

Խմէ՛ անյագ հայ մայրերուն կաթն եռուն,
Դնդերներդ ցուլի կորո՛վ թող իջնէ,
Չախոյ լուսնին, աջդ երկարես արեւուն,
Մարմինդ ամբողջ՝ մայր Հայաստանը բռնէ:

Երբ հնագանդ հայրենիքիդ օրէնքին,
Դու բռնաւոր օտարին դէմ միշտ ելլես,
Այն ատեն լոկ տաք համբոյրով քու ճակտին,
Պիտ՛ ըսեն քեզ. Ապրի՛ս, տղա՛ս, դուն Հա՛յ ես:

* Հայր Վահան Յովհաննեսեանի սոյն բանաստեղծութիւնը իր դիմատետրի էջով մեր ուշադրութեան յանձնած է յարգելի մանկավարժ օրդ. Յասմիկ Քիրտեան:

ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆԻ ԳԻՐՔԻՆ ԵՆՈՐՀԱՆԴԵՍ-ԳԻՆԵՁՈՒԸ...

(Ծարունակուած 10-րդ էջէն)

եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններու եւ արխիւի տնօրէն Ատոյիկ վրդ. Կարապետեանը:

Շնորհանդէսը եզրափակուած է Տեր Ատոյիկի՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի օրհնութեան եւ ողջոյնի փոխանցումով ու Պահպանիչ-աղօթքով: Շնորհանդէս-Գինեձօցի աւարտին, հեղինակ Էօրտեքեան գիրքէն օրհնակներ մակագրած է ներկաներուն:

Յովիկ Էօրտեքեանի 360 էջանոց, հարուստ բովանդակութեամբ, Միութեան ծրագիրներու եւ նախաձեռնութիւններու ցանկերով, աղիւսակներով, ծանօթագրութիւններով, օգտագործուած աղբիւրներով եւ անուանացանկով ամբողջացած ու լուսանկարներով զարդարուած գիրքը լաւագոյն ձեւով կը վաւերագրէ Հ.Բ.Ը. Միութեան Հայաստանի մէջ ծաւալած երեսնամեայ ընդարձակ գործունէութիւնը:

ԳՈՄԱՆՏԱՆԻ ԶԱՏԻԿ ԽԱՆԶԱԴԵԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՏԼԱՍ» (ՎԵՐԱՏՊՈՒԹԻՒՆ, 2025 Թ.)

Հին քարտեզները, աշխարհագրական բնոյթի պատմական աշխատությունները եւ այլ գրատր սկզբնաղբիւրները՝ որպէս անցեալի անմիջական վկայութիւններ, պատմական հետազոտություններում եւ կեղծարարությունների դէմ տեղեկատուական պայքարում իրաւատուկ արժէք են ներկայացնում:



Մեր օրերում անչափ կարեւորում է գրադարաններից, արխիւներից եւ մասնաւոր հասարակութիւններից անհրաժեշտ «քարտեզագրական միութիւն» յայտնաբերումն ու նկարագրումը: Օբյեկտիւօրէն, պատմական սկզբնաղբիւրի տեսքով մեզ է հասել քարտեզագրական հարուստ ժառանգութիւն: Ի դէպ, այդ առումով քիչ երկրներ կարող են հպարտանալ եւ համեմատուել մեզ հետ:

Հայաստանի հին քարտեզներին վերաբերող մեզ յայտնի առաջին հասարակութիւն «Զեկոյց Հայաստանի աշխարհագրական միասնութեան մասին, Պատմական ատլաս»-ը հրատարակուել է 1920 թուականին ֆրանսահայ մեծանուն աշխարհագետ-քարտեզագիր Զ. Խանգաղեանի կողմից (Փարիզ):

Գոմանտանդ Զատիկ Խանգաղեան (3 ապրիլի 1886 թ., Մանիսա (Manisa) բնակավայր, Օսմանեան կայսրութիւն - 23 յունուարի 1980 թ., Փարիզ, Ֆրանսա, ֆրանսահայ ականաւոր քարտեզագիր, աշխարհագետ, հետազոտող, ռազմական եւ հասարակական գործիչ, ֆրանսական Գիմնադրութեան մասնակից, Ֆրանսայի բարձրագոյն՝ «Պատուոյ լեկէոն» շքանշանի ասպետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր (1912 թ.), Հայկական (ՀԽՍՀ) աշխարհագրական ընկերութեան պատուաւոր անդամ (1961 թ.) եւ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արտասահմանեան անդամ (1967 թ.):



Նա հեղինակել եւ համահեղինակել է մի շարք ատլասներ՝ «Զեկոյց Հայաստանի աշխարհագրական միասնութեան մասին, Պատմական ատլաս» (1920 թ.), «Թուրքիայի տնտեսական աշխարհագրութեան ատլաս» (1924 թ.), «Միւրիայի եւ Լիբանանի տնտեսական աշխարհագրութեան ատլաս» (1926 թ.), «Օտ տւփարքամենքի տնտեսական աշխարհագրութեան ատլաս» (1928 թ.), «Ալժիրի պատմական աշխարհագրութեան ատլաս» (1930 թ.), «Պաղեստինի ընդհանուր աշխարհագրութեան ատլաս, պատմական, քաղաքական, տնտեսական» (1932 թ.), «Հայաստանի պատմական քարտեզագրութեան ատլաս» (1960 թ.):



Գոմանտանդ Խանգաղեանը հոգեւոր եւ մշակութային ոլորտներում համագործակցել է ֆրանսացի այնպիսի գործիչների հետ, որոնք իրենց կարիերայի ընթացքում զբաղեցրել են պետական առանցքային պաշտօններ եւ մեծ դեր ունեցել Ֆրանսայի քաղաքական ու հասարակական կեանքում: Մտանալով նրանց պատրաստակամութիւնն ու աջակցութիւնը՝ նա լծում է Ֆրանսայի եւ Հայաստանի միջեւ կապերի զարգացման կարեւորագոյն գործին: Արդիւնքում, 1933 թուականին Փարիզում հիմնում է ֆրանսահայկական տնտեսական կեդրոնը:

Մեծ է Խանգաղեանի դերը հայ երիտասարդների դաստիարակման ու կրթման գործում: 1949 թուականին Սեւրում (Sèvres), ստեղծում է «Հայկական Բոլեճի Ասոցիացիա - Սամուէլ Մուրատ Հիմնադրամ 1846» կազմակերպութիւնը:

Որի նպատակն էր ուսուցանել եւ կրթել հայ երիտասարդներին: Ասոցիացիայի ղեկավար է ընտրում Գոմանտանդ Խանգաղեանը, որը պատասխանատու էր քոլեճի ղեկավարման եւ կառավարման համար:

1977 թ. ստեղծում է մեծանուն Գոմանտանդ Խանգաղեանի անունը կրող «Խանգաղեան Աշխարհագրական ինստիտուտ (Վանտէական պատերազմների բանգարան)» ընկերութիւնը:

1960 թուականին նա հրատարակում է «Հայաստանի պատմական քարտեզագրութեան ատլաս» մեծածաւալ ուսումնասիրութիւնը: Վերջինս իր ձեռով եւ բովանդակային լուծումներով բացառիկ ուսումնասիրութիւն է: Հեղինակը նպատակ է հետապնդել քարտեզների միջոցով ներկայացնել պատմական ժամանակաշրջանների հերթափոխը, անցեալի իրադարձությունների արդիւնքում ձեւաւորուած տարածական փոփոխությունները եւ լուսաբանել հնագոյն ժողովուրդներից մէկի՝ հայերի եւ նրանց հայրենիք Հայաստան երկրի բազմադարեան պատմութիւնը:

Յաւոր, մեծ հետաքրքրութիւն ներկայացնող աշխատությունների մի զգալի

Մեր Արուեստագետները - 420

ԼԱՆԱ ՓՈՇԻԿԵԱՆ

Թիֆլիս ծնած եւ Երեւան հաստատուած արուեստագիտուհի որ արժանացած է զանազան մրցանակներու: Տուած է ցուցահանդէսներ զանազան ռատաններու մէջ, ինչպէս նաեւ՝ Վրաստան: Ուսանած է Երեւանի Գեղարուեստի Պետական Ակադեմիան: Ծանօթ են իր գործերը ծաղիկներով, ծաղկեփունջերով, ինչպէս նաեւ՝ դիմանկարներով:



մասնակցի ցուցահանդէսներու, մինչ այդ քայլ պահած է մերօրեայ արուեստի աշխարհին այցելելով զանազան ցուցահանդէսներու:



րու: 13 տարեկան էր երբ սկսաւ յաճախել արուեստի դպրոց իր ուսուցչին՝ Ռոպերդ Ներսէսովի հետ: Կը ստեղծագործէ Երեւանի մէջ:

մաս, տարբեր պատճառներով, անհասանելի է հանրութեանը: Նման աշխատանքների թուին է դասում նաեւ Զ. Խանգաղեանի «Հայաստանի պատմական քարտեզագրութեան ատլաս»-ը: Այդ բացթողումը շտկելու նպատակով նախաձեռնուել եւ կեանքի է կոչուել վերոյիշեալ «Ատլաս»-ի վերատպումը:

«Ատլաս»-ի վերատպումը հսկայական նշանակութիւն ունի անցեալի մասին գիտելիքները պահպանելու գործում՝ իրական հնարաւորութիւն ստեղծելով հանրութեան աւելի ընդգրկուն շրջանակների օգտուելու այս հազուագիտ ստեղծագործութիւնից:



Ներկայ տեղեկատուական պատերազմում «Ատլասի» վերատպումը նաեւ գործում քայլ է դիմակայելու պատմական կեղծարարություններին:

«Ատլաս»-ի բնագիրը ֆրանսերէնով է: Այն բաղկացած է բացատրական տեքստերից, քարտեզներից եւ նկարներից: Հաւատարիմ մնալով բնօրինակին՝ վերատպումը ատլասը համալրուել է Զատիկ Խանգաղեանի կենսագրութիւնը, «Առաջաբան» եւ «Բովանդակութիւն» բաժիններով: «Ատլաս»-ը լոյս է տեսել երեք լեզուներով՝ ֆրանսերէն, անգլերէն եւ ռուսերէն (խօսքը վերաբերում է միայն տեքստային մասին):



Վերոյիշեալ լրացումներն իրականացնելու ընթացքում ուսումնասիրուել են մեծածաւալ արխիւային միութիւն եւ պատմական քարտեզներին վերաբերող հարիւրաւոր աղբիւրներ: Պատշաճ տպագրութիւն կազմակերպելու համար թուայնացուել է «Ատլաս»-ի բնագրի ամբողջ միւլթը, իսկ որպէսզի «Ատլաս»-ից օգտուելը եւ այն պահպանելը լինի աւելի յարմարաւէտ՝ ստեղծուել է փայտեայ շքեղ պատեան:

Նախագիծը կեանքի է կոչուել նախաձեռնողների՝ մեկեւնաս եւ հասարակական գործիչ պարոն Ռուբեն Գրիգորեանի, այդ հարցում գործուն աջակցութիւն ցուցաբերած Թէքէեան Մշակութային Միութեան նախագահ պարոն Ռուբեն Միրզախանեանի, ինչպէս նաեւ, աշխատանքային խմբի կողմից՝ որին իրենց մասնակցութիւնն են բերել մի շարք մասնագետներ Երեւանի պետական համալսարանից (Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, աշխարհագրութեան եւ երկրաբանութեան ֆակուլտետ), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից (Հիմնարար գիտական գրադարան), Մատենադարանից եւ «ՌՈՒՅՈՎ ԻՆՎԵՍՏ» հոլտիւնկից:

Նախագիծը կեանքի է կոչուել նախաձեռնողների՝ մեկեւնաս եւ հասարակական գործիչ պարոն Ռուբեն Գրիգորեանի, այդ հարցում գործուն աջակցութիւն ցուցաբերած Թէքէեան Մշակութային Միութեան նախագահ պարոն Ռուբեն Միրզախանեանի, ինչպէս նաեւ, աշխատանքային խմբի կողմից՝ որին իրենց մասնակցութիւնն են բերել մի շարք մասնագետներ Երեւանի պետական համալսարանից (Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, աշխարհագրութեան եւ երկրաբանութեան ֆակուլտետ), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից (Հիմնարար գիտական գրադարան), Մատենադարանից եւ «ՌՈՒՅՈՎ ԻՆՎԵՍՏ» հոլտիւնկից:

ՎԱՐՈՒՆ ՄՆԻԹԱՐԵԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
(Մոնպելիէի Փօլ-Վալերիի համալսարան, ֆրանսա)